№ 98 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 23 **1897** ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 23 № 98

ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՏԵԼԵՖՈՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՏԵԼԵՖՈՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱԲԾԱՐՈՒՆԻ

ՇԱԲՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը 2 ռ., ամսական՝ 1 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ»՝ կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸՆ։ Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետեւեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»։ իսկ արտասահմանից Tiflis. Rédaction «MSCHAK»։

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յօնքը չինելու տեղ աչքը չը հանենք. Երիտասարդ Թիւրքիա. Հեռագիրներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Նամակ Ալէքսանդրօպոլից. Նամակ Սուրմալուից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Քաղաքական նոր սպանութիւն. Նամակ Անգլիայից. Նամակ Պարսկաստանից. Նամակ Ամերիկայից. Նամակ Բուլգարիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Քերդեր։

ՅՕՆՔԸ ՇԻՆԵԼՈՒ ՏԵՂ ԱՉՔԸ ՉԸ ՀԱՆԵՆՔ

Մայրաքաղաքի լրագիրների մէջ նորերս հաղորդված էր, թէ կառավարական շրջանները կամենում են արագացնել անդրկովկասեան և մասնաւորապէս Երեւանի նահանգի թափառականներին նստակեաց դարձնելու ծրագրի մշակութիւնը։ Երեւանի նահանգի թափառականների գլխաւոր կօնտինգենտը կազմում են քիւրդերը, որոնք անց են կացնում ձմեռը Արաքսի աւազանի ձմեռոցներում, իսկ ամառը Արագածի, Այրիջայի, Սեւանի, Արարատի արօտատեղերում։ Քիւրդերի բռնած ձմեռոցների ահագին մասը բոլորովին յարմար է երկրագործութեան համար և այժմ արդէն սկսել է ընկնել զութանի տակ։ Եթէ մի և նոյն ժամանակ պետական կամ մասնաւոր ծախքերով ջուր դուրս բերվի թէ Արաքսից, Ախուրեանից և ուրիշ գետակներից և թէ գետնի տակ գտնվող ջրամբարներից, շատ կը լայնանայ և կընդարձակվի մշակութեան համար ընդունակ հողերի ծաւալը, որոնց մի նշանաւոր տարածութիւնը նոյն իսկ մշակվում էր պատմական ժամանակներում։

„Մշակի“ մէջ մենք առիթ ենք ունեցել շօշափել այդ խնդիրը և մեր կողմից ևս պնդել, որ պէտք է եռանդուն միջոցներ ձեռք առնվեն թափառականներին ընտելացնելու նստակեաց կեանքին և երկրագործական կանոնաւոր պարապմունքներին։ Եւ այժմ երբ կառավարչական բարձր շրջանները աշխատում են արագացնել այդ խնդիրը, մենք կարող էինք միայն յայտնել մեր համակրութիւնը այդ գործի վերաբերութեամբ։ Սակայն մենք կարեւոր ենք համարում լուրջ ուշադրութիւն հրաւիրել դէպի այդ ծրագրի մշակութեան խնդիրը, աչքի առաջ ունենալով մի քանի լուրեր, որոնք արձանագրվեցին նոյն իսկ պաշտօնական մամուլի էջերում։ Ի միջի այլոց, իբրև ենթադրութիւն հաղորդված էր, թէ թափառականներին հողաբաժիններ տալու համար մի քանի տեղերում պէտք է խլեն նստակեաց գիւղացիների հողերը և յատկացնեն թափառականների նորակազմ գիւղերին։

Մենք դժուարանում ենք հաւատալ, որ մի այդպիսի առաջարկութիւն լուրջ կերպով դրված լինի կառավարչական շրջանում. բայց այդպիսի մի լուրի երեւան գալը ինքն ըստ ինքեան բնորոշ է և մենք անհրաժեշտ ենք համարում նրան արձանագրել և ամենակտրական կերպով ասել հետեւեալը. ինչքան համակրելի և արդիւնաբար է թափառականներին նստակեաց դարձնելը, այնքան էլ վտանգաւոր և ցնցաղակար է այժմեան նստակեաց գիւղացիների հողերի փոքրացնելը՝ թափառականներին հող տալու նպատակով։ Մեր երկրում չէ կան այնպիսի բազմահող գիւղացիներ, որոնք զգում լինեին հողի չափազանց առատութիւն և եթէ նոյն իսկ գոյութիւն ունեն այդպիսիները, անհրաժեշտ է նկատի առնել երկրատեւ մշակելու և օգտվելու բարոյական իրաւունքները, որոնք ճանաչվել են միշտ ամեն տեղ թէ հին և թէ նոր հողային օրէնսդրութիւնների մէջ։

Յաւելի է, որ ծրագրի հիմնական մասերը յայտնի չեն մամուլին և հասարակութեան, որի շրջանում շատ կը գտնվէին գործին ծանօթ հմուտ մարդիկ, որոնց կարծիքները և խորհրդածութիւնները կարող էին նպատակայարմար լինել գործի ամբողջութեան և կատարելութեան նպաստելու համար։ Մամուլի մէջ երեւացող լուրերը կցկտուր են և հաղորդված են իբրև ենթադրութիւններ։ Գործի մեծութիւնը պահանջում է բազմակողմանի քննութիւն և մանրամասն մշակութիւն, որպէս զի չը սպրդեն խոշոր սխալներ, և յօնքը շինելու տեղ աչքն էլ չը հանենք։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԻԱ

Երիտասարդ-Թիւրքիայի ղեկավարներից մի քանիսը հաշտվեցին սուլթանի հետ, իսկ նրանց թերթերը մի քանի ճռճռան յօդուածներ հրատարակելուց յետոյ խափանվեցին։ Այդ առիթով անգլիական «Daily News» լրագրի Պարիզի թղթակիցը հաղորդում է հետեւեալ տեղեկութիւնները Պարիզում ապրող Թիւրք պատասխան բաղաքաղների մասին։

Սուլթանի յատուկ յանձնարարութեամբ՝ Պարիզ ուղարկված Ահմէդ Ջելալեդդին փաշա, որ այս օրերս թողեց Պարիզ, մասնաւոր խօսակցութիւնների մէջ ուրանում էր իրան յատուկ միսսիա յանձնարարելը։ Հաւանական է, որ Կ. Պոլսի գաղտնի ոստիկանութեան գլխաւորը անյարմար էր զգում պարծենալ իր յանձարարութեամբ այն պարտութիւնից յետոյ, որ կրեց Թիւրք կառավարութիւնը «Մեշվերեթ» լրագրի դատից յետոյ։ Չը նայելով իր բացատրման՝ Ահմէդ Ջալալեդդին նախ Կօնտրեքսեվիլլում և ապա Սէն-Ժերմենում բանակցութիւններ ունեցաւ Երիտասարդ-Թիւրքիայի կուսակցութեան ջաւոր և թոյլ անդամների հետ։ Երիտասարդ-Թիւրքիայի Պարիզում գտնվող անդամներից շատերը, որոնց թւում և ուսանողները, կարօտաւորապէս դառնում։ Գոյութեան կատաղի կռիւը երբէք դադար չէր առել այս երկնքի տակ։ Կարելի է դառնում նոյն իսկ այնպիսի հարց՝ թէ արդեօք մարդը իր արեան գետերով պակաս է ողողել այս միջնաշխարհը, քան երկինքը իր անձրեւներով։

Կռիւը, անդադար կռիւը, վերջապէս, սպանեց քաղաքակրթութիւնը. կեանքը քարացաւ. նրա համար միակ հասկանալի դերագոյն այժը—բրոնակալութիւնն էր։ Այս անխորտակելի այժը անջրդի անապատներ տարածեց հինաւուրց քաղաքակրթութեան մշակած դաշտերի տեղ. ամենահարուստ երկիրը մատնվեց անբուժելի ցաւերի։ Բազմաթիւ ազգեր անհետացան, բայց նրանցից շատերը ողորմելի փշրանքներ թողեցին, որոնք անմատչելի բարձրութիւնների վրա ապաստան գտան և չինական պատեր քաշելով իրանց շուրջը, վայրենութիւնն ու արնախում հակումները պաշտպանութեան զէնք դարձնելով, կարողացան անկատելի մնալ դարերի ընթացքում իրանց խորշերի մէջ և այդպէս պահպանել իրանց ցեղական առանձնայատկութիւնները։ Վաղեմի սովորութիւնները, կրօնը և ոչնչանալու ընդհանուր երկիւղը—ահա թէ ինչ կապեր էին պահում այդ առանձնացած ժողովուրդների ներքին միացնող ու դիմադրող այժերը։

Այժմեան ժամանակ փոքր-Ասիայի նախկին մեծ ազգերի այդ փոքրիկ բեկորները դեռ ներկայացնում են նոյն դրութիւնը, որ ստեղծել է դարերի թշուառ պատմութիւնը։ Մի վերաշինող, խաղաղացնող ձեռք դեռ չէ դիպել այդ կուսական երկրին. դեռ այնտեղ դրված է գոյութեան կռւի իստակ գաղանային միջոց։ Եւ այժմ էլ այդ կռիւը անխոնջ կերպով վարողը կրօնն է։ Տիրապետող կրօնը—իսլամը դեռ չէ հաշտվել իր դարաւոր մանր ոսոխների հետ, իսկ Օսմանեան պետութիւնը 500 տարի Եւրոպայի չքնաղ անկիւնում նստելուց յետոյ էլ, չէ մոռացել իր առաջին հիմնադիրների դժոխային քաղաքականութիւնը։

Իսլամը, ինչպէս յայտնի է, ազգութիւններ չէ ընդունում։ Իր ամեն մի հաւատացողին նա դարձնում է միւսուլման, Ալլահի երկրպագու։ Այդ հանգամանքից շատ լաւ օգտվեցին Օսմանեան առաջին սուլթանները։ Թափառական նոմադների այն ցեղը, որից դուրս եկան Էրթօղրուլ, Օսման, շատ փոքր էր ահագին նուաճումներ գործելու և մի մեծ պետութիւն ստեղծելու համար։ Այդ ահագին խոչընդոտը վերացրեց նորակազմ պետութեան դիւական հանճարը։ Նա սկսեց կլանել այն քրիստոնեայ տարրերը, որոնց մէջ տարածում էր իր իշխանութիւնը։ Քրիստոնեաների մատաղ ու առոյգ սերունդը պատկանում էր իսլամին։ Մի մասը գնում էր կուսի դաշտը (ենիչէրիներ), միւս մասը լցնում էր թիւրքաց հարեմները։ Առաջին սուլթանները շատ լաւ իմացել էին, որ ամենամոլեռանդ մահմեդականներ են դառնում հաւատափոխ քրիստոնեաները։ Եւ իրաւ, Օսմանեան պետութեան ամբողջ փայլն ու մեծութիւնը ստեղծել են մահմեդականացած քրիստոնեաները։ Հասկանալի է որ սուլթանների գլխաւոր հոգը պիտի լինէր իսլամի մէջ ձուլել բոլոր ոչ-իսլամ ազգերը։ Դարերի ընթացքում այդ միջոցը գործադրվեց լայն չափերով։ Թէև միշտ խուլ ընդդիմադրութեան էր հանդիպում այդ բռնութիւնը, բայց իսլամը իր գործը կատարեց. կլանելով մանր ազգութիւններից խոշոր պատառներ, նա միանգամից երկու նպատակի հասաւ. նախ՝ մեծացրեց կիսալուսնի ժողովուրդը, երկրորդ՝ կատաղի թշնամութիւն զցեց համարիւն ցեղակիցների մէջ. բաւական էր, եթէ մի ցեղի նոյն իսկ աննշան մասը իսլամանում էր. այդ հաւատափոխները դառնում էին իրանց եղբայրակիցների պատուհասը և չէին թոյլ տալիս նրանց որ և է ծուռ միտք անել իսլամական բռնապետութեան դէմ։ Նորագոյն փաստերից բաւական է յիշել Կրետէի մահմեդական յոյներին և մի քանի քուրդ ցեղեր, որոնց մասին հաստատ ենթադրութիւն կայ թէ հայերից են ծագել։

Այն օրվանից, երբ սուլթանների պետութիւնը սկսեց քայքայվել, երբ քրիստոնեայ Եւրոպան խնամակալութիւն հաստատեց «հիւանդ մարդու» վրա, Թիւրքիայում ապրող այլակրօն ազգերի հարցը աւելի սուր կերպարանք ստացաւ։ Իսլամական խառնիճաղանջ ստեղծել ամեն տեղ—այս էր կործանվող պետութեան միակ յոյսը։ Ոչ-իսլամ ազգերը համարեա թէ ամբողջապէս դատանում էին քրիստոնէական կրօնը, ուստի Եւրոպայի համակրութիւններն էին վայելում։ Գոյութիւն ունեն այդպիսիները, անհրաժեշտ է նկատի առնել երկարատեւ մշակելու և օգտվելու բարոյական իրաւունքները, որոնք ճանաչվել են միշտ ամեն տեղ թէ հին և թէ նոր հողային օրէնսդրութիւնների մէջ։

Յաւելի է, որ ծրագրի հիմնական մասերը յայտնի չեն մամուլին և հասարակութեան, որի շրջանում շատ կը գտնվէին գործին ծանօթ հմուտ մարդիկ, որոնց կարծիքները և խորհրդածութիւնները կարող էին նպատակայարմար լինել գործի ամբողջութեան և կատարելութեան նպաստելու համար։ Մամուլի մէջ երեւացող լուրերը կցկտուր են և հաղորդված են իբրև ենթադրութիւններ։ Գործի մեծութիւնը պահանջում է բազմակողմանի քննութիւն և մանրամասն մշակութիւն, որպէս զի չը սպրդեն խոշոր սխալներ, և յօնքը շինելու տեղ աչքն էլ չը հանենք։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԻԱ

Երիտասարդ-Թիւրքիայի ղեկավարներից մի քանիսը հաշտվեցին սուլթանի հետ, իսկ նրանց թերթերը մի քանի ճռճռան յօդուածներ հրատարակելուց յետոյ խափանվեցին։ Այդ առիթով անգլիական «Daily News» լրագրի Պարիզի թղթակիցը հաղորդում է հետեւեալ տեղեկութիւնները Պարիզում ապրող Թիւրք պատասխան բաղաքաղների մասին։

Սուլթանի յատուկ յանձնարարութեամբ՝ Պարիզ ուղարկված Ահմէդ Ջելալեդդին փաշա, որ այս օրերս թողեց Պարիզ, մասնաւոր խօսակցութիւնների մէջ ուրանում էր իրան յատուկ միսսիա յանձնարարելը։ Հաւանական է, որ Կ. Պոլսի գաղտնի ոստիկանութեան գլխաւորը անյարմար էր զգում պարծենալ իր յանձարարութեամբ այն պարտութիւնից յետոյ, որ կրեց Թիւրք կառավարութիւնը «Մեշվերեթ» լրագրի դատից յետոյ։ Չը նայելով իր բացատրման՝ Ահմէդ Ջալալեդդին նախ Կօնտրեքսեվիլլում և ապա Սէն-Ժերմենում բանակցութիւններ ունեցաւ Երիտասարդ-Թիւրքիայի Պարիզում գտնվող անդամներից շատերը, որոնց թւում և ուսանողները, կարօտաւ-

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Ռուսաց գործակալութեան)

Կ. Պոլիս, 21 օգոստոսի։ Սուլթանի գահ բարձրանալու օրը երեկ հանդիստ անցաւ։ Ընդհանուր կարծիքով, անհանդիստ լինելու պատճառներ չը կան, և այլ ևս չը պէտք է երկիւղ կրել հայկական նոր յանցաւոր փորձերից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայր Ֆ. Շարմրան. Livre d'or des martyrs de la charité. Vendu au profit de la souscription pour les victimes des massacres d'Arménie, Պարիզ 1897

Զարմանալի է այն եռանդը, որ ցոյց է տալիս հայր Ֆելիքս Շարմրան փոքր Ասիայի թշուառ հայերին օգնելու գործում։ Այն ժամանակ, երբ Ֆրանսիայի հասարակական կարծիքը վարձկան գրիչների ազդեցութեան տակ, զարմանալի սառնասրտութեամբ էր վերաբերվում Հայաստանում կատարված գազանութիւններին, մահմեդականացած քրիստոնեաները։ Հասկանալի է որ սուլթանների գլխաւոր հոգը պիտի լինէր իսլամի մէջ ձուլել բոլոր ոչ-իսլամ ազգերը։ Դարերի ընթացքում այդ միջոցը գործադրվեց լայն չափերով։ Թէև միշտ խուլ ընդդիմադրութեան էր հանդիպում այդ բռնութիւնը, բայց իսլամը իր գործը կատարեց. կլանելով մանր ազգութիւններից խոշոր պատառներ, նա միանգամից երկու նպատակի հասաւ. նախ՝ մեծացրեց կիսալուսնի ժողովուրդը, երկրորդ՝ կատաղի թշնամութիւն զցեց համարիւն ցեղակիցների մէջ. բաւական էր, եթէ մի ցեղի նոյն իսկ աննշան մասը իսլամանում էր. այդ հաւատափոխները դառնում էին իրանց եղբայրակիցների պատուհասը և չէին թոյլ տալիս նրանց որ և է ծուռ միտք անել իսլամական բռնապետութեան դէմ։ Նորագոյն փաստերից բաւական է յիշել Կրետէի մահմեդական յոյներին և մի քանի քուրդ ցեղեր, որոնց մասին հաստատ ենթադրութիւն կայ թէ հայերից են ծագել։

Այն օրվանից, երբ սուլթանների պետութիւնը սկսեց քայքայվել, երբ քրիստոնեայ Եւրոպան խնամակալութիւն հաստատեց «հիւանդ մարդու» վրա, Թիւրքիայում ապրող այլակրօն ազգերի հարցը աւելի սուր կերպարանք ստացաւ։ Իսլամական խառնիճաղանջ ստեղծել ամեն տեղ—այս էր կործանվող պետութեան միակ յոյսը։ Ոչ-իսլամ ազգերը համարեա թէ ամբողջապէս դատանում էին քրիստոնէական կրօնը, ուստի Եւրոպայի համակրութիւններն էին վայե-

հայը Շարմբտան հրատարակեց իր յայտնի «Martyrologie» գրքոյկը կոտորածների մասին, որը պաշտօնական աղբիւրներից քաղած տեղեկութիւններով, սարսուռ առաջացրեց ամբողջ Ֆրանսիայում: Հանելով իր նպատակին, այն է գրգռելով սաստիկ հետաքրքրութիւն դէպի հայոց հարցը, հայր Շարմբտան ձեռնարկեց մի աւելի վեհ և անհրաժեշտ գործ.—նիւթական օգնութիւն հայցնել Հայաստանի կոտորածների զոհերի ընտանիքներին և կենդանի մնացած թշուառ աղքատներին: Նա հանդգնակութիւն բաց արեց կաթոլիկների մէջ և կարճ ժամանակում հաւաքեց կէս միլիոն ֆրանկից աւելի պատկառելի գումար: Սակայն նա դրանով չը բաւականացաւ և նոյն իսկ իր հայրենիքին՝ Ֆրանսիային, հասած ամենացաւալի մի աղէտի ժամանակ չը մոռացաւ թիւրքաց գաղանութիւնների զոհերին, և ընդհակառակը, օգուտ քաղեց այդ աղէտից, այդ զոհերի համար բացված հանգանակութեան գործը աւելի առաջ տանելու համար:

Դեռ թարմ է ամենքի յիշողութեան մէջ այն սարսափելի աղէտը, որ պատահեց Պարիզում, մայիսի 4-ին, Ժան Գուժոն փողոցում: Զարհուրելի հրդեհը մի քանի վայրկեանում մոխիր դարձրեց բարեգործական նպատակով բացված բազարը և իր փլատակների տակ ծածկելով 130 հոգի, ընկղմեց ամբողջ երկիրը խոր սուգի մէջ: Ահա այդ սոսկալի դէպքի նկարագրութիւնը կազմում է այն մեծածաւալ, 292 երկնալ էջերից բաղկացած պատկերազարդ հրատարակութեան նիւթը, որի վերնագիրն առաջ բերեցինք վերևում: Նկարագրելով բարեգործական բազարը, հրդեհը, տեղի ունեցած հերոսական քաջութիւնները, հեղինակը առաջ է բերում բոլոր այն ցաւակցական հեռագիրները և նամակները, որ աշխարհի զանազան կողմերից, թագաւորներ, հռչակաւոր քաղաքական, գիտնական և հասարակական գործիչներ ուղղեցին Ֆրանսիային այդ մեծ աղէտի պատճառով. ապա առաջ են բերված դամբանական ճառերը, եւրոպական մամուլի նշանաւոր օրգանների յայտնած կարծիքը և վերջում զոհերից շատերի լուսանկարները և համառօտ կենսագրութիւնները. զոհերի, որոնց հայր Շարմբտան անուանում է «զթութեան մարտիրոսներ» և նրանց յիշատակին նուիրված գիրքը «Ոսկէ գիրք» («Livre d'or»): Եւ «Ոսկէ գրքի» արդիւնքը (գինը 5 ֆրանկ) հեղինակը նուիրում է Հայաստանի կոտորածների զոհերի համար բացված հանգանակութեան օգտին:

Սակայն ինչ կապ կայ մայիսի 4-ի Պարիզի աղէտի և Հայաստանի կոտորածների մէջ: Հեղինակը այդ երկու սոսկալի աղէտների մէջ, որոնցից մէկը կատարվեց քաղաքակրթութեան փայլուն օջախում, Պարիզում, իսկ միւսը բարբարոսութեան և ֆանատիկոսութեան հայրենիքում—Թիւրքիայում, բարոյական կապ է զգում: Ցունաստանի ազատութիւնը պարզ ցոյց էր տալիս թէ ինչ են նշանակում եւրոպական համակրութիւնները: Իւրաքանչիւր քրիստոնեայ համայնքի մէջ վերածնութեան, ազատութեան դաղափարն էր հաստատվում: Սուլթանները, ամենևին չը քաշվելով այն հանգամանքից, որ ապրում են XIX դարում, սկսեցին մի դաղանի չարագործութեան սիստեմ, որի նպատակն էր անվնաս դարձնել ոչ-իսլամ ցեղերը: Այդ բանի մէջ նրանց շատ նպաստում էր քրիստոնեայ Եւրոպան: Եթէ արևմուտքի համակրութիւնները նպաստեցին մի երկու ազգերի ազատութեան, միւս կողմից ուրիշ ազգութիւններին պատճառեցին անասելի թշուառութիւններ:

Այդ անհերքելի իրողութիւնը ներկայ դարում ապացուցվել է մի շարք զարհուրելի կոտորածներով: Ամենից առաջ իսլամի անդթութիւնները իր վրա փորձեց Փոքր-Ասիայի մի խեղճ, մոռացված քրիստոնեայ ժողովուրդ, մէկը այն փոքրիկ բեկորներից, որոնք մնացել են հին մեծ ազգերից: Դա ասօրա—քաղդէական ժողովուրդն է, որի մեծամասնութիւնը հայերի դրակիցն ու բախտակիցն է և որի ճակատագիրն է նոյնպէս անմռունչ զոհ դառնալ քրդական բարբարոսութիւններին: Այդ անծանօթ ժողովրդի մասին կը լինի մեր խօսքը:

II

Պարսկաստանի Ուրմիա և Սալմաստ գաւառներում, Թիւրքիայի Հէքքեարի, Գեավառ գաւառներում, Դիարբէքիրի, Բաղդադի, Մուսուլի շրջականներում, Միջագէտքի, Սիրիայի և Լիբանանի մէջ ապրում է մի ժողովուրդ, որ սերված է հին ասորի և քաղդէական ցեղերից: Պարսկաստանում և Թիւրքիայի արևելեան նահանգներում այդ ժողովուրդը յայտնի է «այսօրի» (ասորի, պարսկերէն «նասրանի») անունով: Բայց դա ասորա-քաղդէական այս մնացորդի ընդհանուր ազգային անունը չէ. սովորաբար այդպէս անուանվում են նեստորական ասորիները, մինչդեռ ուրիշ աղանդներին պատկանողները կրում են իրանց դաւանութեան անունը, օրինակ՝ «եաղուբի», «մարոնիտ» և այլն:

Դրականապէս յայտնի չէ ասորա-քաղդէական ժողովրդի ընդհանուր թիւը: Այսքանը միայն կարելի է ասել, որ Պարսկաստանի, արևելեան Թիւրքիայի և Լիբանանի մէջ նա ներկայացնում է խիտ ազգաբնակութիւն: Ասորիները պատկանում են սեմիտական ցեղին. նրանք ունեն սեմական դրեր, որոնք մնացել են հին ժամանակներից: Ասորական գրերը, ինչպէս այդ յատուկ է սեմիտական գրերին, կարդացվում են ձախից դէպի աջ, չունեն ձայնաւորներ, որոնք փոխարինվում են տառերի վրա կամ տառերի տակ դրած նշաններով: Ասորական գրականութիւնը ծաղկեց մանաւանդ քրիստոնէութեան առաջին դարերում: Եփրեմ Ասորի և Մծբնեցի Յակոբ նշանաւոր գրական և կրօնական գործիչներ էին և անցել են սրբերի կարգը: Մանաւանդ ս. Յակոբը մեծ յարգանք է վայելում հայերի մէջ: Սակայն IV դարից սկսած՝ արևելեան եկեղեցին հերձուածողական և աղանդաւորական պայքարներից պատակավում է. Ասորեստանը, որ ամենայն եռանդով մասնակցում էր ժամանակի կրօնական վիճաբանութիւններին, մի առանձին համակրութիւն էր ցոյց տալիս հերձուածողներին: Մանաւանդ լաւ ընդունելութիւն գտաւ Նեստորի վարդապետութիւնը, որ դատապարտվեց Եփեսոսի ժողովում 431 թուականին: Ինչպէս յայտնի է, Նեստոր ուսուցանում էր որ Քրիստոս մարդ ծնվեց, իսկ աստուածային բնութիւնը յետոյ խառնվեց մարդկային բնութեան հետ: Այդ պատճառով կոյս Մարիամին նա անուանում էր ոչ թէ Աստուածածին, այլ Քրիստոսածին: Այդ վարդապետութեան դէմ ղինվեց Եւտիքէս, որ մի նոր հերձուած կազմեց. նա ասում էր թէ Քրիստոսի մէջ լոկ միայն աստուածային բնութիւն է մնացել: Եւտիքէսի աղանդը նոյնպէս մերժվեց Քաղկեդոնի ժողովում: Բայց երկու աղանդներն էլ մտան ասորիների մէջ: Եդեսիայի եպիսկոպոս Եպսուբ Զանդալա 541 թուին սկսեց տարածել Եւտիքէսի վարդապետութիւնը. այդ պատճառով միաբնակութեան աղանդին հետևողները անուանվեցին «եաղուբներ»: Մի երրորդ աղանդ, որ ուսուցանում էր թէ Քրիստոսի մէջ կար միայն մի կամք, այն է աստուածային կամք, նոյնպէս տարածվեց Լիբանանի ասորիների մէջ: Տարածողն էր Մար Մարօն (սուրբ Մարօն), ուստի նրան հետևողները ստացան մարոնիտ անունը:

Եւ այսպէս, ասորի ժողովուրդը, բաժանվելով առանձին աղանդների, ապրում էր առանձին առանձին իբրև կրօնական երեք տարբեր համայնքներ: Ներքին ազգակցական կապը չը կարողացաւ պահպանել նոյն իսկ լեզուն. նա այժմ բոլորովին մոռացվել է Բաղդադի շրջականներում և Սիրիայում և գործ է ածվում արաբական լեզուն. մարոնիտներն էլ համարեա բոլորովին մոռացել են իրանց ազգային լեզուն:

Նեստորական ասորիներ: Ապրում են Պարսկաստանում և Թիւրքիայի արևելեան նահանգներում: Եկեղեցու կազմակերպութիւնը քրիստոնէական առաջին դարերի շատ կարգեր ունի: Գլխաւորում է Նեստորի վարդապետութիւնը. պատկերներ չէ ընդունում, բայց սրբերին պաշտում է: Խոստովանութիւն չը կայ: Թոյլատրվում է բազմակնութիւն, բայց օրինական է համարվում այն կինը, որ պսակվել է եկեղեցում: Պասերը դոյութիւն ունեն. պահում են չորեքշաբթի և ուրբաթ օրերը, մեծ պասը, 25 օրվայ պաս Ծնունդից առաջ: Հետաքրքրական է երեք օրվայ պասը, որ պահվում է Նինուէի աղատութեան յիշատակին: Կրօնասէր մարդիկ ծոմ են պահում այդ ժամանակ: Այդ ծոմը, ինչպէս կարծում են, գոյութիւն ունէր քրիստոնէութիւնից առաջ:

Եկեղեցու գլուխն է Մար-Շիմօն: «Մար» նը-

նում: Ահա ինչ է ասում նա, աւելի լուսաբանելով այն միքը, որ արտայայտեց հրդեհի զոհերի թաղման օրը յայտնի քարոզիչ հայր Օլիվիէ իր դամբանական ճառի մէջ, որ ամբողջովին առաջ է բերված գրքում: «Մենք յղացանք և իրագործեցինք ծրագիր՝ մի Ոսկէ գրքի մէջ ամփոփելու լրագիրների մէջ երևցած բոլոր նշանաւոր յօդուածները մայիսի 4-ի աղէտալի դէպքի մասին, ինչպէս և զթութեան մարտիրոսների պատկերները համառօտ կենսագրական տեղեկութիւններով: Նրանց յիշատակը չը պէտք է ջնջվի մեր մէջ: Պէտք է, որ սիրելի զոհերը, որոնք մեռան բարութիւն գործելով, չարունակեն գործել այդ բարութիւնը, նոյն իսկ իրանց հերոսական վախճանից յետոյ: Եւ որպէս զի այդ կատարվի, որպէս զի նրանցից յետոյ բարեգործութիւն անվի նրանց անունով, այս «Ոսկէ գրքի» ամբողջ արդիւնքը կը գործադրվի օգնելու համար միւս զոհերին, ոչ զթութեան, այլ հաւատի, որոնք կենդանի են մնացել Հայաստանի այն երեք հարիւր հազար քրիստոնեաներից յետոյ, որոնց մորթատեց մուսուլման ֆանատիկոսութիւնը: Աւաղ, Ժան-Գուժոն փողոցի խարոյկը ակամայ յիշեցնում է մի ուրիշ խարոյկ, աւելի ահռելի, Ուրֆայի, նախկին Եդեսիայի մայր տաճարի խարոյկը, ուր կորան թիւրքերի ձեռքով նաւթով բորբոքված բոցերի մէջ, ոչ թէ 130 զոհեր, այլ 3000-ից աւելի կանայք, ջահիլ աղջիկներ և փոքր երեխաներ»:

Այդ նկարագրելով Ուրֆայի սոսկալի կոտորածը, որ արդէն յայտնի է, հեղինակը շարունակում է. «Աւելի քան 300,000 հայեր ընկել են մուսուլմանների դաշոյնի տակ հաւատի համար, թողնելով հաղարաւոր որբեր առանց հայրի և ազատաստանի, հաղարաւոր կանայք և աղջիկներ, որոնք հարէմների ճարակ են դառնում: Այդ մարտիրոսներից յետոյ ապրող աւելի քան հինգ հարիւր հազար անձինք ամենասոսկալի թշուառութեան մէջ են: Մուսուլման ֆանատիկոսութեան և Եւրոպայի սոսոր լքման այդ զոհերը այսօր մի զարհուրելի հանգամանքի առաջ են կանգնած. կամ ուրանալ իրանց հաւատը, կամ մեռնել քաղցից և թշուառութիւնից, եթէ մենք նրանց օգնութեան չը հասնենք: Պէտք է խոստովանել, որ քրիստոնեայ Եւրոպայի մեղակցութեամբ իսլամը կարողացաւ կատարել և շարունակում է դեռ կատարել իր հաւատի համար մի ամբողջ ազգ ջնջելու բարբարոս գործը: Մենք երբէք չենք դադարի կրկնելուց, մինչև որ քրիստոնէութիւնը հասկանայ իր պարտաւորութիւնը. երբէք անպատիժ չեն մնում այն ազգերը, որոնք այդպիսի սնիրներ են գործում մարդկութեան, արդարութեան, իրաւունքի դէմ: Այդ գործում, Եւրոպան և Ֆրանսիան, որոնք ոչ մի իրական միջոցի չը դիմեցին վերջ դնելու այդ սոսկալի վիճակին, մի զերազոյն յանցանք գործեցին մարդկութեան դէմ և դա սարսափելի պատիժներ կարող է բերել մեր գլխին: Այդ պատճառով, ով կարող է երաշխաւորել, որ մայիսի 4-ի աղջակէզի այդ աղնիւ և սուրբ զոհերը Ֆրանսիայի վերջինը չեն»:

Տայ Աստուած, որ այդ լինի վերջին փրկանքը:

Հ. Ա.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Օգոստոսի 11-ին

Օգոստոսի 9-ին մեր հասարակութեան մի ուրոյ դասակարգը առիթ ունեցաւ վայելել մի գեղարուեստական զուարճութիւն, շնորհիւ Ալեքսանդրիայի և Իրանսկայա օդերային երգչուհիների: Լինելով գեղարուեստական ամեն մի զուարճութիւններից զուրկ և հեռու, կեանքի ճնշող և յուսահատեցնող պայմանների մէջ՝ մեր հասարակութեան համար այդ փոքրիկ դէպքերն էլ ունենում են իրանց նշանակութիւնը: Երգչուհի Ալեքսանդրիայի վաղուց ծանօթ էր մեր հասարակութեանը. նա որանից երեք տարի առաջ նոյնպէս երգել է մեր բեմի վրա, բայց այս անգամ նա թողեց աւելի հմուտ և շնորհալի երգչուհու տպաւորութիւն: Նրա երգած եղանակների մէջ առանձին ուշադրութեան արժանի էր Գոդարի «Калибельная пѣсня» երգը, որը ընդունվեց բուռն ծափահարութիւններով: Իսկ ինչ վերաբերում է միւս երգչուհուն, կասենք, որ յարգելի օրիորդը դեռ շատ անփորձ է. նրա երգածներից աչքովեց իր այժերին համապատասխան մի արիա «Էրնանի» օպերայից: Կոնցերտի ծրագիրը կազմում էին բացի Վերդիի, Զայկօվսկու, Գունոյի, Գոդարի և այլ եւրոպական երաժիշտների հեղինակութիւններից, նաև մի քանի արևելեան եղանակներ, որ կատարեց կոնցերտին մասնակցող երաժիշտ Տիգրանեան: Շնորհակալութիւն մեր կլուբի աւագներին, որ հաճեցին զիջանել երգչուհիներին դէթ կլուբի ձմերային շինութեան դահլիճը: Պարոններ աւագները անչուշտ տեսան թէ ինչքան լաւ բան է բարի գործ կատարելը:

Մեր նորաբաց դումայի մասին առ այժմ այսքանը կասենք, որ մեծ ջանքերով շատանում է ուսումնասիրել գործերը, ձեռք առնել իր ամբողջ իրաւունքների զեկը, որից յետոյ միայն հնար կը լինի օրինաւոր և եռանդուն գործունէութիւն: Այս ամսի վերջերին սպասում ենք իշխան կառավարչապետին, որի ընդունելութիւնը այժմեանից դարձել է մեր դումայի օրվայ հարցը:

Պ. Մ.

ՆԱՄԱԿ ՍՈՒՐՄԱԼՈՒԻՑ

Օգոստոսի 5-ին

Սուրմալու գաւառի Եայջուայ հասարակութիւնը միաք է յղացել, ժողովրդական վճիռ կայացնելով՝ հասարակութեան տանուտէրին վարձատրել ոսկէ շղթայով տանուտէրական նշանը կրելու՝ նրա արդար և օգտակար պաշտօնավարութեան համար: Եթէ այդ միաքն իրագործվի, մի օրինակելի գործ կը լինի: Եայջուայ հասարակութիւնը, որ առաջ Ալիղամարլուի հասարակութիւն էր կոչվում, վարչական ռէֆորմները գործադրվելու օրից մինչև այժմ երբէք մի այսպիսի արդար տանուտէր չէր տեսել, որպէս ներկայ տանուտէր Խմայիլ բէգ Սուլթանովն է: Այդ հասարակութեան իւրաքանչիւր անդամը այժմ ամենայն վստահութեամբ կարող է դիմել տանուտէր Խմայիլ բէգին, յայտնել իր ցաւը, ստանալ բաւարարութիւն, առանց նախապէս կաշառքի համար փող ձեռք բերելու վրա մտածելու, յուսալով՝ որ իր գործը առանց կաշառքի էլ՝ արդարութեան շաւղից չի դուրս գայ և կողմնապահութեան չէ ենթարկվի: Խմայիլ բէգ Սուլթանով կարող է օրինակելի լինել ամբողջ գաւառի տանուտէրների համար. նա թէև ուսում առած մարդ չէ, դիտէ միայն թուրքերէն գրել կարդալ և հաղիւ իր անունը և ազգանունը ստորագրում է ռուսերէն, սակայն նա ընդունակ է հասկանալու ժողովրդի ցաւերը. նրա դատարանը պատկառելի հիմնարկութեան աղդեցութիւն է անում այցելուի վրա:

Շատ տանուտէրներ հասարակութեան մէջ արհեստական կերպով կռիւներ և վէճեր են առաջացնում, որպէս զի հնար ունենան դրամ կորզելու, տեղի անտեղի իւրաքանչիւր պատահողից «չարաք» (տուգանք) են առնում և այդ փողերը, փոխանակ հասարակական դրամագլխին միանալու՝ տանուտէրի սեփականութիւնն են դառնում: Գիտենք դիւղական հասարակութիւններ, որոնք խօլերայից և ժանտախտից այնքան չեն վախենում, որքան տանուտէրների «չարաքներից»: Հէնց նոյն Եայջուայ հասարակութիւնը, որի տանուտէրը, երկու տարի առաջ, Հասան Ալօ օղլին էր, սաստիկ ենթարկված էր «չարաք» վճարելուն. մենք շատ անդամ ականատես ենք եղել՝ թէ ինչպէս տանուտէր Հասանը մի չնչին առիթ բռնած դալիս էր Ալիղամարլու դիւղը և ձիու վրա նստած հրամայում էր՝—«քօփօղլի ջաղա բաշիք, թոփ իլէք շուտ. ձեր ամեն մէկը երկու մանէթ չարաքի պտի տաք», առանց ձիուց իջնելու ստանում էր փողերը և գնում: Հաւատի ենք, որ այդ փողերը ոչ մի մատեանում չէին արձանագրվում. տուգանք վճարողները երբէք անդորրագիր չէին ստանում, որպէս պահանջում է օրէնքը:

Այժմ այդպէս չէ: Խմայիլ բէգ Սուլթանով ներկայումս աշխատում է երկու բան իրագործել, նախ՝ որ հիմնվի գիւղական բանկ և երկրորդ՝ կազմակերպել հացահատիկների հասարակական չափարան: Առաջինով ժողովուրդը ազատված կը լինի վաշխառուներին դիմելուց, իսկ երկրորդով ժողովուրդը ապահովված կը լինի բնութեան աղէտներից: Ցաւսով ենք, որ տանուտէր Սուլթանով չի դադարի այդ մտքերը իրագործելուց, իսկ ժողովուրդը չէ մոռանայ նրան վարձատրել ոսկեայ շղթայով, որպէս մատդրվել է արդէն:

Յովհ. Խօջաէյնաթեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» այս համարը բաղկացած է 6 երեսից։

—

Երէկ, օգոստոսի 22-ին, պրոֆէսոր Անդրէաս Արծրունին Պետերբուրգից, Բագուի վրայով եկաւ Թիֆլիս։

—

Մեզ հաղորդում են, որ վերջին օրերս Կարսի Նահանգից սկսվել է թիւրքահայ գաղթականների մի մեծ հոսանք դէպի Թիֆլիս։ Ամեն օր գալիս են 20, 30, 40 հոգուց բաղկացած խմբեր. նրանք աշխատանք և գործ են որոնում և խնդրում են ուղարկել իրանց Բաթում, Բագու, Գանձակ, մշակութիւն անելու համար։ Անհասկանալի է, ինչպէս միշտ, այդ թշուառների տեսքը. հիւանդոտ, կիսամերկ, բոբիկ, քաղցած, տանջված, առանց անկողնի։ Բարեգործական ընկերութիւնից նրանք ստանում են սկզբնական օգնութիւն և ապա մի մասը ուղարկվում է Բագու և Բաթում։ Մանաւանդ չատ դժալի է բժշկական օգնութեան պակասութիւնը՝ չատ բժիշկների քաղաքից բացակայ լինելու պատճառով։ Գաղթականները սկսել են հեռանալ Կարսի Նահանգի գիւղերից այն պատճառով, որ գիւղական ազգաբնակութիւնը այլ ևս անկարող է կերակրել և խնամել նրանց։ Մենք կարծում ենք, որ անհրաժեշտ է կազմակերպել մի բիւրօ, որ յատկապէս զբաղվի աշխատանք և գործ հայթայթելով գաղթականներին։

—

VII-րդ միջազգային զէօլոգիական կոնգրէսի բացումը տեղի է ունեցել Պետերբուրգում, օգոստոսի 17-ին, ինչպէս հեռագրում են «Рус. Вѣд.»ը։ Բացման հանդէսը կատարվել է կայսերական ակադէմիայի կենդանաբանական միւզէումում։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի վաճառականների աւագ Ե. Դաւիդով ստացել է Պետերբուրգի ֆրանսիական դեսպան կոմս Մոնտէբելլոից հետևեալ հեռագիրը, իբրև պատասխան առևտրականների կողմից ուղղած շնորհաւորական հեռագրի. «Հանրապետութեան նախագահը, Ռուսաստանից բաժանվելուց առաջ, խորին կերպով զգացվելով անձնանուէր բարեկամութեան այն վկայութեամբ, որ դուք տալիս էք Ֆրանսիային, որի ներկայացուցիչն է նա, յանձնարարել է ինձ արտայայտել ձեզ իր անկեղծ և ջերմ շնորհակալութիւնները. նա տանում է իր հետ այն հոյակապ ընդունելութեան անջնջելի յիշատակը, որ նուիրագործում է մեր երկու ազգերի դաշնակցութիւնը։ Կեցցէ Ռուսաստան»։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի քաղաքային վարչութեան նախաձեռնութեամբ այս օրերս, Թիֆլիսի Օրթաճալա կոչված մասի այգիներից մէկում, նախաճաշիկ պէտք է տրվի մեր քաղաքը հիւր եկած բժիշկներին։

—

VII-րդ միջազգային զէօլոգիական կոնգրէսի փակումից յետոյ, որ տեղի կունենայ սեպտեմբերի 6-ին, նրա անդամներից մօտ 700 հոգի կայցելեն Կովկասը։

—

Լսում ենք, որ մեր ինտելիգենցիայի երիտասարդ անդամներից մէկը, Յովհաննէս Սունդուկեանց, գրել է մի դրամա, «Սիրա» անունով։ Պիէսի նիւթը վերցրած է Մոսկվայի հայոց կօլոնիայի կեանքից։ Դրաման գրված է ռուսերէն լեզուով, այժմ թարգմանվում է հայերէն՝ Թիֆլիսի հայոց բեմի վրա մօտ ժամանակներս ներկայացնելու համար։

—

ԽԱՆԹԵՆԴԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի 11-ին եկեղեցական գլխոցում տեղի ունեցաւ ընտանեկան երեկոյթ։ Երեկոյթը կազմված էր երգերից, ոտանաւորներից և ներկայացումից։ Սիրողները ներկայացրին՝ «Խէչօի թուղ», «Մաղօի կտակ» և «Սկըռի հարսանիք» վոդեվիլները։ Ներկայ էր երկու սեռի մեծ բազմութիւն։ Ներկայացումը՝ չը նայելով չատ անյարմարութիւններին, սպասածից աւելի աջող անցաւ։ Շնորհակալութեան արժանի են պ.պ. Ի. Գաբրիէլեան, Տ. Մելքումեանց, Կ. Սողոմոնեան և Յ. Սարգսեան, որոնք սիրով մասնակցեցին երեկոյթին։ Միայն մի նկատողութիւն խանքենդցիներին. ամբողջ խանքենդում չը գտնվեց մի տիկին, որ կնոջ դեր յանձն առնէր ներկայացմանը, այնպէս որ ստիպված եղանք կնոջ դերը տղայի յանձնել. այս դէպքը պատիւ չէ բերում խանքենդցիներին։ Ինչպէս երևում է, խանքենդցիները դեռևս հին նահապետական փտած գաղափարներով են առաջնորդվում։ Վերջապէս, ժամանակ է այդ նեղ, խաւար մթնոլորդից դուրս գալու, մթնոլորդ, որի մէջ աւելի վատ գործեր են կատարվում ու կաչկանդում մարդու հոգին»։ Ի դէպ՝ նկատենք, որ հասարակութեան մեծ մասը չը գիտէ հանդէսների ժամանակ իրան կարգին պահել։ Իսկ եթէ սրա վրա աւելացնենք թուրք ամբոխի ու մի քանի թափառաշրջիկների անհանգստութիւնը, այն ժամանակ հասկանալի կը լինի մեր դրութիւնը։ Մեր պօլիցիան էլ կարծես միայն հանդիսատես լինելու համար է ներկայ գտնվում»։

—

ԱՂՍՏԱՖԱՅԻՑ, օգոստոսի 19-ից, մեզ գրում են. «Այս դիշեր Ղազախ գիւղաքաղաքում, քէֆի ժամանակ, միմեանց հետ կռւում են Դաղքեսաման գիւղացի Կալուածատէր Սուլթան-Մէջիդ-աղա Մուրադով և դրանքեսամանցի Թուրք Ալասը. կռւի ժամանակ ինչ որ վիրաւորանք հասցնելուց յետոյ՝ Մուրադով դաշոյնով տեղն ու տեղը սպանում է Ալասին և ինքը փախչում։ Ասում են, որ գնացել է իր ազգականի մօտ՝ Աղ-բեօշնակ թուրքաբնակ գիւղը։ Մեր գաւառը վերջին ժամանակներս կատարեալ արեան դաշտ է դարձել. ամեն օր համարեա մարդասպանութիւն է լինում»։

—

ԱԲԱՍԹՈՒՄԱՆԻՑ մեզ գրում են. «Մի քանի տարուց ի վեր խնդիր կար Աբասթումանում հայոց եկեղեցի շինելու մասին։ Բաղաքնակ Յակոբ Ադամեան յանձն էր առել իր ծախսով շինել եկեղեցին, ընտրել էին հոգաբարձուներ՝ շինութեան տեղը և թոյլատրութիւնը ստանալու մասին։ Թէպէտ երկուսն էլ ժամանակին ստացվել էին և եկեղեցու պլանը արդէն հաստատվել էր, բայց հոգաբարձուների մէջ տարաձայնութիւն ընկնելով՝ եկեղեցու համար նշանակված տեղի մասին՝ գործը մինչև այս տարի ձգձգվում էր։ Այս ամառ վերջապէս խնդիրը լուծվեց վերջնականապէս։ Օգոստոսի 19-ին՝ եկեղեցու տեղը (640 քառակուսի սաժէն) չափվեց և յանձնվեց հոգևոր իշխանութեան հաւատարմատարին, և անմիջապէս մշակներն սկսեցին հիմքը փորել։ Հիմնաքարը պէտք է հանդիսաւոր կատարվի կիրակի, օգոստոսի 24-ին։ Հանդէսին հրաւիրվելու է յատկապէս նաև Թիֆլիսի առաջնորդը։ Եկեղեցու տեղը գտնվում է Աբասթումանի ներքևի մասում, Օրթաճալա կոչված տեղում, նոր շինվող զօրանոցից փոքր ինչ վեր, Թամար Թագուհու աւերակ ամրոցի ուղիղ դէմ ու դէմ, ճանապարհի մակերևոյթից մօտ մի սաժէն բարձրութեան վրա։ Դիրքն ու տեսարանը ինքն ըստ ինքեան գեղեցիկ են, բայց տեղը յարդված չէ»։

—

ՄԱՆԳԼԻՍԻՑ մեզ գրում են. «Պետերբուրգի կոնսէրվատօրիայի աշակերտ՝ երգիչ Ա. Մամաջանեան, օգոստոսի 12-ին, Զիմողցեանցի դահլիճում, տուաց մի կոնցէրտ։ Նա երգեց Բիգօլէտոյից, մի քանի կտորներ Տրավիատայից, Զայկովսկու romance-ը և այլն։ Երիտասարդ երգչի ձայնը բաւական հարուստ է, բայց դեռ մշակման կարօտ, ի հարկէ։ Համերգին մասնակցում էին դաշնակահար օր. Գ. Մէլիքեան, երգչուհի Բուխչայան, վիոլենչելիստ Գօբրօխաւով և ուրիշները, որոնցից առաջինը Թիֆլիսի երաժշտական դպրոցի նորաւարտ աշակերտուհիներից է, իսկ վերջին երկուսը նոյնպէս Պետերբուրգի կոնսէրվատօրիայումն են սովորում։ Պ. Գօբրօխաւով մեծ աջողութիւն ունեցաւ. նա գիտէր տիրապետել իր մեքամաղոտ գործիքին, երբեմն նոյն իսկ վիրտուօզական հմտութեամբ։ Օր. Մէլիքեան շնորհալի կերպով ածեց մի քանի կտորներ Շոպէնից և Լիստից ու վարձատրվեց մի քանի փունջերով։ Լսում ենք, որ օրիորդը նոյնպէս մտադիր է կոնսէրվատօրիա մտնել։ Դահլիճը բոլորովին լի էր, մուտքը չատ աջող։

—

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Կ. Պոլսից հեռագրում են. «Բ. Դրան մէջ ձերբակալված հայը, որին կասկածում էին իբրև յեղափոխականի, դուրս եկաւ անմեղ, ուստի և արձակվեց։ Նա մի լուսայատոս է, Սարգիս անունով, որ պատահմամբ գտնվել էր Բ. Դրան մէջ պայթումի միջոցին։ Երբ նա սարսափի ազդեցութեան տակ փախչում էր՝ նրան կալանաւորեցին։ Նա գնացել էր Բ. Դուռը՝ տեսնելու Իզզէտ էֆէնդի անունով մի անձի, որ ծառայում է մեծ վիզիրի դիւանատանը։ Իզզէտ, երբ կալանաւորվածի առաջ բերվեց, ուրացաւ իր ծանօթութիւնը, բայց յետոյ պարզվեց, որ դա թիւրիմացութեան արդիւնք էր»։

—

Կ. Պոլսից հեռագրում են Լօնդօն. «Թալաթբա փողոցում կալանաւորեցին մի մարդ, որ ինչպէս ենթադրում են՝ Բ. Դրան մէջ ռումբ գցողի գործակիցն է։ Նա փորձեց ատրճանակ արձակել. բայց ոստիկանութիւնը նրան վայր գլորեց։ Պերայի լեհական փողոցում ոստիկանութիւնը կամենում էր կալանաւորել մի հայի, բայց սա ինքնասպանութեամբ վերջ դրեց իր կեանքին։ Թաքսիմ թաղում մի հայի տան մէջ կալանաւորեցին մի կնոջ և տան մէջ գտան հայ կոմիտեի բազմաթիւ հրատարակութիւններ և երեք ռեւոլվերի կնիքներ։ Ցանցաւորներին քննեցին նախապէս Պերայի Մասեր բէյ, Հալիդ բէյ, Շեմալ բէյ և Ահմեդ բէյ դատաւորները։ Գալաթա Սերայում բռնված, Սարգիս անունով, քննութեան միջոցին յայտնեց, որ նա պատկանում է յեղափոխական կոմիտեին, որ գտնվում է Լօնդօնում։ Նա միշտ ստանում էր առատ փող։ Օսմանեան բանկում կալանաւորված հայի անունն է Կիրակոս։ Նա գեղեցկադէմ երիտասարդ մի մարդ է. նա սկզբում լռում էր, բայց բազմաթիւ հարցաքննութիւններից յետոյ յայտնեց հետևեալը. «Կ. Պոլսի կոմիտեի նախագահը վարձեց ինձ համար Պերայում մի սենեակ և տուաց ինձ չատ փող։ Նա բերեց ինձ համար եւրօպական զգեստ, չապկի, գլխարկ։ Ես հայելու առաջ չատ չուտ վարժվեցի կրել այդ շորերը։ Երբ ես դուրս էի գալիս տնից, ես ծխում էի առանձին տեսակ մի սիգար, որ պայմանական էր կոմիտեի անդամների համար։ Ամսի 6/18-ին ինձ պատուիրեցին տանել իմ ռումբը օսմանեան բանկը։ Ես գնացի և դռնապանի հետ խօսեցի կէս թիւրքերէն կէս անգլերէն և յայտնեցի, որ ես եկել եմ փող մանրացնելու։ Ես ներս գնացի. սակայն շնորհիւ իմ ձեռքին բռնած առարկայի, դարձրին ինձ վրա առանձին ուշադրութիւն և մի ուրիշ մարդ սկսեց ինձ հարցափորձի ենթարկել։ Ենթադրելով, որ ճանաչել են իմ ով լինելը, ես վճռեցի ծխախոտի միջոցով հպատակվում են մէլիքները, որոնք ժառանգաբար տիրում են մի կամ մի քանի գիւղերի։ Հին ժամանակներում մէլիքները Մար-Շիմօնի հրամանով զօրք էին հանում ժողովրդից։ Մինչև 40-ական թուականները Հէբքիարիի սասրիները անկախ էին և թիւրքաց իշխանութիւնը անուանական էր։ Բայց այդ ժամանակից սկսած թիւրքաց կառավարութիւնը հետզհետէ մացրեց իր վարչական կարգերը։ Չը նայած այս հանգամանքին, Մար-Շիմօնը այժմ էլ մեծ հեղինակութիւն ունի իր հօտի մէջ. նա ման է գալիս իր վիճակը, դատաստան է կազմում և վճռում է քաղաքացիական գործեր։ Մար-Շիմօնները առհասարակ քաջ մարդիկ են։

Այսպէս ահա, նեստորական քաղդէացիները մինչև այժմ պահպանել են իրանց ազգութիւնը և լեզուն, թէև հարկադրված են եղել անդադար կռիւներ մղել թիւրքերի և քրդերի դէմ։ Նեստորականների թիւը մօտաւորապէս հասնում է 102 հազարի։ Կան նաև մօտ 60 հազար կաթոլիկ քաղդէացիներ և անհրաժեշտ թւով բողոքականներ։

Եազուբիներ։ Մի քանի հնացած տեղեկութիւններին նայելով, եազուբի ասորիների թիւը թէ Փոքր Ասիայում և թէ Հնդկաստանում հասնում է մօտաւորապէս 185 հազարի։ Եազուբիների կրօնական ծէսերը չատ նման են հայերի ծէսերին *)։ Եազուբիները սիրով յաճախում են հայոց եկեղեցիները, և առհասարակ այս երկու ազգերը, որոնք ծագումով բոլորովին տարբեր են միմեանցից, չատ մօտ են միմեանց։ Միւս կողմից եազուբիները իրանց նեստորական ազգակիցների կրօնական և ազգային աւանդութիւններին էլ չատ մօտ են։ Եազուբի պատրիարքը նստում է Մարդինի մօտ, Զաֆէրանի վանքում. նա համարվում է Անտիոքի եպիսկոպոս Իգնատիոսի յաջորդ. ուստի բոլոր պատրիարքները իրանց անուան առաջ դնում են «Իգնատիոս» անունը (օրինակ, «Մար Իգնատիոս-Եակուբ»)։ Եազուբիներն ունեն բազմաթիւ վանքեր և եկեղեցիներ։

Մարոնիտներ։ Ցայսմի դիտական Պետերման 1860 թուին մարոնիտների թիւը համարում է 525,000. այդ թուից մօտ 43 հազար ապրում են Կիպրոսում, իսկ մնացածը Լիբանանում և Սիրիայում։ Մարոնիտների եկեղեցին դարերի ընթացքում չատ մօտեցել է կաթոլիկ եկեղեցուն։ Նրանց պատրիարքը դեռ XIII դարում ստացել է Հռոմի պապից «Ալէքսանդրիայի պատրիարք» տիտղոսը։ Լիբանանում մարոնիտների վանքերի թիւն է 62, իսկ եկեղեցիների թիւը 356։

(Կը շարունակվի)

*) 1896 թուականին Թիւրքիայից վտարած հայ գաղթականները, որոնց մեծ կողմը թիւրքերի կոտորածներից ազատվելու համար Սուրբ Հոգուն այն հանգամանքը, որ եազուբիների կրօնը չատ նման է հայոց կրօնին, պատճառ չը դարձաւ որ թիւրքերը սկսեցին նրանց էլ հալածել ու կոտորել։

չանակում է տէր, սուրբ, իսկ Շիմօն—Սիմէօն։ Ցայսմի չէ թէ ինչու նեստորական բոլոր կաթողիկոսները կրում են այդ անունը։ Ենթադրում են որ առաջին կաթողիկոսը կոչվում էր Մար-Շիմօն, և նրա բոլոր յաջորդները այդ անունը դործադրեցին իբրև պատուի անուն։ Ասում են և այն թէ Մար-Շիմօն կոչվում են ի պատիւ Պետրոս առաքեալի (որ առաջ կոչվում էր Սիմէօն). աւանդութիւն կայ թէ ասորիներին մկրտել է Պետրոս առաքեալը։ Մար-Շիմօնի պաշտօնը համարեա ժառանգական է.—ժառանգում է նրա եղբօր որդին կամ քրոջ որդին։ Ապագայ պատրիարքը մանկութիւնից պատրաստվում է այդ պաշտօնին և ժամանակը անց է կացնում աղօթք անելով և պաս պահելով։ Ասում են, որ ապագայ Մար-Շիմօնի մայրը պարտաւոր է պաս պահել յղութեան օրից մինչև ծընունդը։ Երբ վերջանում է Մար-Շիմօնի առհմը, հաւաքվում են եպիսկոպոսները, նշանաւոր աշխարհականները և նոր Մար-Շիմօն են ընտրում։

Նեստորական պատրիարքները առաջ նստում էին Տիարբեքիրում, բայց XVII դարի երկրորդ կէսից նրանց աթոռը տեղափոխվել է Ջուլամէրիկ, Բոչանիս գիւղը, ուր և մնում է մինչև այժմ։ Մար-Շիմօնից յետոյ կրօնական առաջին պաշտօնն է «Սէյմանա դ'Մար-Շիմօն», որ կրում է «մաթրան» (միտրոպոլիտ) տիտղոսը և բնակվում է Նիւչիա գիւղում (Դեավարի գաւառում)։ Միտրոպոլիտին ստորադրված են եպիսկոպոսները, որոնց ժողովուրդը անուանում է «Բռունա»։ Դրանք կուսակրօն են և ընտրվում են յայտնի առհմերից։ Կան ութ եպիսկոպոսներ. չորսը Ասիական Թիւրքիայում և չորսը Պարսկաստանում։ Մար-Շիմօնը, միտրոպոլիտը և եպիսկոպոսները վարդապետի կեանք են անցկացնում։ Վանքեր այժմ չունեն ասորիները. ճգնավորները պաս են պահում և աղօթք են անում։

Քահանաների դասը («քաշա») մեծ պատիւ ունի ասորիների մէջ։ Քահանայութիւնն էլ համարեա ժառանգական է. քահանայացուները դրամագլուխ ստանում են մի քահանայի կամ եպիսկոպոսի մօտ. պատահում են չատ քահանաներ, որոնք բոլորովին անգրագէտ են։ Առհասարակ ամբողջ հոգևորական դասը ապրում է ժողովրդի տուրքերով և նուէրներով։ Ցորենից, բրինձից և այլ բոյսերից նշանակված է տասանորդ։ Բայց առհասարակ հոգևորականութիւնը չատ աղքատ է, և հոգևորականները ապրուստ գտնելու համար պարապում են զանազան արհեստներով։ Նկատենք և այն, որ ասորի հոգևորականը իր հագուստով չատ քիչ է զանազանվում աշխարհականից. նոյն իսկ Մար-Շիմօնը միայն հանդիսաւոր օրերում է հագնում եպիսկոպոսական զգեստ, որը, այնուամենայնիւ, չատ քիչ է զանազանվում աշխարհականի զգեստից։

Մար-Շիմօնը իր հոգևոր պաշտօնի հետ միացրել է և աշխարհական իշխանութիւնը. նրան Աղ-բեօշնակ թուրքաբնակ գիւղը։ Մեր գաւառը վերջին ժամանակներս կատարեալ արեան դաշտ է դարձել. ամեն օր համարեա մարդասպանութիւն է լինում»։

—

ԱԲԱՍԹՈՒՄԱՆԻՑ մեզ գրում են. «Մի քանի տարուց ի վեր խնդիր կար Աբասթումանում հայոց եկեղեցի շինելու մասին։ Բաղաքնակ Յակոբ Ադամեան յանձն էր առել իր ծախսով շինել եկեղեցին, ընտրել էին հոգաբարձուներ՝ շինութեան տեղը և թոյլատրութիւնը ստանալու մասին։ Թէպէտ երկուսն էլ ժամանակին ստացվել էին և եկեղեցու պլանը արդէն հաստատվել էր, բայց հոգաբարձուների մէջ տարաձայնութիւն ընկնելով՝ եկեղեցու համար նշանակված տեղի մասին՝ գործը մինչև այս տարի ձգձգվում էր։ Այս ամառ վերջապէս խնդիրը լուծվեց վերջնականապէս։ Օգոստոսի 19-ին՝ եկեղեցու տեղը (640 քառակուսի սաժէն) չափվեց և յանձնվեց հոգևոր իշխանութեան հաւատարմատարին, և անմիջապէս մշակներն սկսեցին հիմքը փորել։ Հիմնաքարը պէտք է հանդիսաւոր կատարվի կիրակի, օգոստոսի 24-ին։ Հանդէսին հրաւիրվելու է յատկապէս նաև Թիֆլիսի առաջնորդը։ Եկեղեցու տեղը գտնվում է Աբասթումանի ներքևի մասում, Օրթաճալա կոչված տեղում, նոր շինվող զօրանոցից փոքր ինչ վեր, Թամար Թագուհու աւերակ ամրոցի ուղիղ դէմ ու դէմ, ճանապարհի մակերևոյթից մօտ մի սաժէն բարձրութեան վրա։ Դիրքն ու տեսարանը ինքն ըստ ինքեան գեղեցիկ են, բայց տեղը յարդված չէ»։

—

ՄԱՆԳԼԻՍԻՑ մեզ գրում են. «Պետերբուրգի կոնսէրվատօրիայի աշակերտ՝ երգիչ Ա. Մամաջանեան, օգոստոսի 12-ին, Զիմողցեանցի դահլիճում, տուաց մի կոնցէրտ։ Նա երգեց Բիգօլէտոյից, մի քանի կտորներ Տրավիատայից, Զայկովսկու romance-ը և այլն։ Երիտասարդ երգչի ձայնը բաւական հարուստ է, բայց դեռ մշակման կարօտ, ի հարկէ։ Համերգին մասնակցում էին դաշնակահար օր. Գ. Մէլիքեան, երգչուհի Բուխչայան, վիոլենչելիստ Գօբրօխաւով և ուրիշները, որոնցից առաջինը Թիֆլիսի երաժշտական դպրոցի նորաւարտ աշակերտուհիներից է, իսկ վերջին երկուսը նոյնպէս Պետերբուրգի կոնսէրվատօրիայումն են սովորում։ Պ. Գօբրօխաւով մեծ աջողութիւն ունեցաւ. նա գիտէր տիրապետել իր մեքամաղոտ գործիքին, երբեմն նոյն իսկ վիրտուօզական հմտութեամբ։ Օր. Մէլիքեան շնորհալի կերպով ածեց մի քանի կտորներ Շոպէնից և Լիստից ու վարձատրվեց մի քանի փունջերով։ Լսում ենք, որ օրիորդը նոյնպէս մտադիր է կոնսէրվատօրիա մտնել։ Դահլիճը բոլորովին լի էր, մուտքը չատ աջող»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Կ. Պոլսից հեռագրում են. «Բ. Դրան մէջ ձերբակալված հայը, որին կասկածում էին իբրև յեղափոխականի, դուրս եկաւ անմեղ, ուստի և արձակվեց։ Նա մի լուսայատոս է, Սարգիս անունով, որ պատահմամբ գտնվել էր Բ. Դրան մէջ պայթումի միջոցին։ Երբ նա սարսափի ազդեցութեան տակ փախչում էր՝ նրան կալանաւորեցին։ Նա գնացել էր Բ. Դուռը՝ տեսնելու Իզզէտ էֆէնդի անունով մի անձի, որ ծառայում է մեծ վիզիրի դիւանատանը։ Իզզէտ, երբ կալանաւորվածի առաջ բերվեց, ուրացաւ իր ծանօթութիւնը, բայց յետոյ պարզվեց, որ դա թիւրիմացութեան արդիւնք էր»։

—

Կ. Պոլսից հեռագրում են Լօնդօն. «Թալաթբա փողոցում կալանաւորեցին մի մարդ, որ ինչպէս ենթադրում են՝ Բ. Դրան մէջ ռումբ գցողի գործակիցն է։ Նա փորձեց ատրճանակ արձակել. բայց ոստիկանութիւնը նրան վայր գլորեց։ Պերայի լեհական փողոցում ոստիկանութիւնը կամենում էր կալանաւորել մի հայի, բայց սա ինքնասպանութեամբ վերջ դրեց իր կեանքին։ Թաքսիմ թաղում մի հայի տան մէջ կալանաւորեցին մի կնոջ և տան մէջ գտան հայ կոմիտեի բազմաթիւ հրատարակութիւններ և երեք ռեւոլվերի կնիքներ։ Ցանցաւորներին քննեցին նախապէս Պերայի Մասեր բէյ, Հալիդ բէյ, Շեմալ բէյ և Ահմեդ բէյ դատաւորները։ Գալաթա Սերայում բռնված, Սարգիս անունով, քննութեան միջոցին յայտնեց, որ նա պատկանում է յեղափոխական կոմիտեին, որ գտնվում է Լօնդօնում։ Նա միշտ ստանում էր առատ փող։ Օսմանեան բանկում կալանաւորված հայի անունն է Կիրակոս։ Նա գեղեցկադէմ երիտասարդ մի մարդ է. նա սկզբում լռում էր, բայց բազմաթիւ հարցաքննութիւններից յետոյ յայտնեց հետևեալը. «Կ. Պոլսի կոմիտեի նախագահը վարձեց ինձ համար Պերայում մի սենեակ և տուաց ինձ չատ փող։ Նա բերեց ինձ համար եւրօպական զգեստ, չապկի, գլխարկ։ Ես հայելու առաջ չատ չուտ վարժվեցի կրել այդ շորերը։ Երբ ես դուրս էի գալիս տնից, ես ծխում էի առանձին տեսակ մի սիգար, որ պայմանական էր կոմիտեի անդամների համար։ Ամսի 6/18-ին ինձ պատուիրեցին տանել իմ ռումբը օսմանեան բանկը։ Ես գնացի և դռնապանի հետ խօսեցի կէս թիւրքերէն կէս անգլերէն և յայտնեցի, որ ես եկել եմ փող մանրացնելու։ Ես ներս գնացի. սակայն շնորհիւ իմ ձեռքին բռնած առարկայի, դարձրին ինձ վրա առանձին ուշադրութիւն և մի ուրիշ մարդ սկսեց ինձ հարցափորձի ենթարկել։ Ենթադրելով, որ ճանաչել են իմ ով լինելը, ես վճռեցի ծխախոտի միջոցով

չանակում է տէր, սուրբ, իսկ Շիմօն—Սիմէօն։ Ցայսմի չէ թէ ինչու նեստորական բոլոր կաթողիկոսները կրում են այդ անունը։ Ենթադրում են որ առաջին կաթողիկոսը կոչվում էր Մար-Շիմօն, և նրա բոլոր յաջորդները այդ անունը դործադրեցին իբրև պատուի անուն։ Ասում են և այն թէ Մար-Շիմօն կոչվում են ի պատիւ Պետրոս առաքեալի (որ առաջ կոչվում էր Սիմէօն). աւանդութիւն կայ թէ ասորիներին մկրտել է Պետրոս առաքեալը։ Մար-Շիմօնի պաշտօնը համարեա ժառանգական է.—ժառանգում է նրա եղբօր որդին կամ քրոջ որդին։ Ապագայ պատրիարքը մանկութիւնից պատրաստվում է այդ պաշտօնին և ժամանակը անց է կացնում աղօթք անելով և պաս պահելով։ Ասում են, որ ապագայ Մար-Շիմօնի մայրը պարտաւոր է պաս պահել յղութեան օրից մինչև ծընունդը։ Երբ վերջանում է Մար-Շիմօնի առհմը, հաւաքվում են եպիսկոպոսները, նշանաւոր աշխարհականները և նոր Մար-Շիմօն են ընտրում։

Նեստորական պատրիարքները առաջ նստում էին Տիարբեքիրում, բայց XVII դարի երկրորդ կէսից նրանց աթոռը տեղափոխվել է Ջուլամէրիկ, Բոչանիս գիւղը, ուր և մնում է մինչև այժմ։ Մար-Շիմօնից յետոյ կրօնական առաջին պաշտօնն է «Սէյմանա դ'Մար-Շիմօն», որ կրում է «մաթրան» (միտրոպոլիտ) տիտղոսը և բնակվում է Նիւչիա գիւղում (Դեավարի գաւառում)։ Միտրոպոլիտին ստորադրված են եպիսկոպոսները, որոնց ժողովուրդը անուանում է «Բռունա»։ Դրանք կուսակրօն են և ընտրվում են յայտնի առհմերից։ Կան ութ եպիսկոպոսներ. չորսը Ասիական Թիւրքիայում և չորսը Պարսկաստանում։ Մար-Շիմօնը, միտրոպոլիտը և եպիսկոպոսները վարդապետի կեանք են անցկացնում։ Վանքեր այժմ չունեն ասորիները. ճգնավորները պաս են պահում և աղօթք են անում։

Քահանաների դասը («քաշա») մեծ պատիւ ունի ասորիների մէջ։ Քահանայութիւնն էլ համարեա ժառանգական է. քահանայացուները դրամագլուխ ստանում են մի քահանայի կամ եպիսկոպոսի մօտ. պատահում են չատ քահանաներ, որոնք բոլորովին անգրագէտ են։ Առհասարակ ամբողջ հոգևորական դասը ապրում է ժողովրդի տուրքերով և նուէրներով։ Ցորենից, բրինձից և այլ բոյսերից նշանակված է տասանորդ։ Բայց առհասարակ հոգևորականութիւնը չատ աղքատ է, և հոգևորականները ապրուստ գտնելու համար պարապում են զանազան արհեստներով։ Նկատենք և այն, որ ասորի հոգևորականը իր հագուստով չատ քիչ է զանազանվում աշխարհականից. նոյն իսկ Մար-Շիմօնը միայն հանդիսաւոր օրերում է հագնում եպիսկոպոսական զգեստ, որը, այնուամենայնիւ, չատ քիչ է զանազանվում աշխարհականի զգեստից։

Մար-Շիմօնը իր հոգևոր պաշտօնի հետ միացրել է և աշխարհական իշխանութիւնը. նրան

վառել դինամիտի պատրոյգը. բայց իմ չարժուումները նկատեցին և անմիջապէս ինձ բռնեցին։»

—

Անգլիական «Daily News» լրագիրը Կ. Պոլսից ստացած առաջին լուրերի ապաւորութեան տակ տպագրեց հետեւեալ առաջնորդողը հայերի մասին։

«Խառնակութիւնների նորոգվելը Կ. Պոլսում ներկայումս, ինչպէս երևում է, լուրջ հետեւանքներ չէ առաջ բերել։ Հայոց հարցը մի յայտնի ժամանակով արտաքսված է իբրև հերթական հարց։ Ինչ վերաբերում է դիպլոմատներին՝ նրանք ստիպված են լռել նախ Կրետէի գործերի և ապա յունական պատերազմի պատճառով։ Բայց ինքն ըստ ինքեան, հայերի սեփական տեսակէտից, խնդիրը այժմ պակաս կարևոր չէ, քան առաջ և ոչ ոք չը պէտք է զարմանայ, եթէ դժբաղդ ժողովրդի մեջ յուսահատական տրամադրութիւնը կրկին աշխատի դարձնել Եւրոպայի ուշադրութիւնը այն սարսափելի զրկանքների վրա, որոնք բարձրագոչ աղաղակում են։ Անկարելի է երևակայել աւելի մութ և անբաւական հաշիւ, քան այն, որ ներկայացրեց պարլամենտին արտաքին գործերի քարտուղար Կրզոն հայկական գործերի մասին։ Կոտորածների արիւնածարաւ բազուկը ժամանակաւորապէս, ճիշդ է, դադարեցրել է մեծ չափով գործելը, սակայն հալածանքները շարունակվում են այնպիսի յամառութեամբ և անողոքութեամբ, ինչպէս առաջ։ Պետութիւնների յորդորները մեծցին առանց ազդեցութեան և այն պատիժները, որ խոստացել էր Բ. Դուռը տալ հեղինակներին, տեղի չունեցան ամօթաբար։ Լորդ Սոլսբիւրի, պէտք է արդարացի խոստովանել, առիթ չը բաց թողեց հարցը առաջ տանելու. սակայն հէնց այն բարեպատեհ միջոցին, հոկտեմբերին, երբ նա աջողեցրեց ընդունել տալ պետութիւններին միահամուռ ճնշում գործ դնելու ծրագիրը, խոչընդոտ հանդիսացաւ յունական պատերազմը, որ առաջ բերեց նոր դժուարութիւնների և վտանգաւոր հարցերի մի կոյտ։ Ո՞վ կարող է զարմանալ, եթէ այսպիսի հանգամանքներում հայ գործողները նորից յուսահատութեան մէջ են ընկել։ Մեր առաջ հարց է դրված. ինչ է անելու սուլթանը կամ ինչ են մտադիր անել պետութիւնները, կամ նրանցից որ և է մէկը, որպէս զի առաջն առնեն անցեալ տարվայ նման կոտորածներին։ Անցել է արդէն երկու տարի այն օրից, որ լորդ Սոլսբրի յայտնեց միւս պետութիւններին, թէ թագուհու կառավարութիւնը համաձայն է մի այնպիսի քայլ անելու, որով սուլթանը զգայ, թէ նա իր համար անվտանգ չը պէտք է համարի ներկայ իր վարմունքները շարունակելը։ Մեր ստացած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ թիւրք կառավարութիւնը այս անգամ չուտափոյթ միջոցների է ձեռնարկել զանազան չափութիւնների առաջն առնելու համար։ Սակայն պետութիւնները թէ միասին և թէ առանձին պէտք է ջանք գործ դնեն, որ անցեալ տարվայ կոտորածները չը նորոգվեն կրկին։»

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՍՊԱՆՈՒԹԻՒՆ

—

Սպանիական մինիստր-նախագահ Կանովաս դէլ-Կաստիլոյի սպանութեան ծանր. տպաւորութիւնը դեռ չը ջնջված, հեռագիրները հաղորդում են մի նոր սարսափելի սպանութիւն, որի չարժառիթները դրեթէ նոյնն են, ինչ որ Կանովասի սպանութեան չարժառիթները։ Սպանվել է հարաւային Ամերիկայի Ուրուգվայ հանրապետութեան նախագահ Բօրդան։ Սպանողը մի երիտասարդ է՝ Աբրէգօնդ անունով և պատկանում է «սպիտակների» կուսակցութեան։ Ուրուգվայի հանրապետութիւնը մի քանի ժամանակից ի վեր քրօնիկական յեղափոխութեան մէջ է գտնվում։ Երկու կուսակցութիւններ—«կարմիրների» և «սպիտակների» կուսակցութիւնը, աշխատում են իրանց ձեռքը զցել երկրի իշխանութիւնը։ Տիրապետող հանգիստում է «կարմիրների» կուսակցութիւնը, որի եռանդուն անդամներից մէկն էր Բօրդան։ Սա իր յատկութիւններով խորին ատելութեան առարկայ էր դարձել երկրում, բայց «կարմիրների» կուսակցութիւնը, որ հիմնվում է գեղջուկների, անիրաւութեան և կամայականութեան վրա, աշխատեց և աջողեցրեց Բօրդան ընտրութիւնը, համոզված լինելով, որ նա մի հնազանդ գործիք կը լինի կուսակցութեան ձեռքում և կիրագործի իր ծրագիրները։ Եւ ճշմարիտ, Բօրդան իրմը այնպիսի անիրաւութիւններ և ապականութիւն սաեղծեց, որ «սպիտակների» ընդդիմադիր կուսակցութիւնը, յենվելով հասարակական կարծիքի վրա, այս տարվայ մարտ ամսին պարզեց երկրի մէջ ապստամբութեան դրօշակը։ Ապստամբութեան պարագլուխները իրանց յայտարարութեան մէջ հրաւիրում են ժողովուրդը ապստամբել՝ տապալելու անսկզբունք և կաշառակեր կառավարութիւնը։ Եւ Բօրդան սպանութիւնը հետեանք է այն բէժիմի, որ մի քանի տարիներից ի վեր ճնշում է երկիրը։

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԻԱՅԻՑ

—

Լ օ ն դ օ ն, օգոստոսի 19-ին

Թիւրք և պարսկական սահմանագլխին վրա կատարված դէպքերու մասին քանի մը օրէ ի վեր հասած հեռագիրները չատ մը վախեր կազդեն մեզի, որ թրքական քաղաքականութեան նրբութիւններուն վարժած ենք։ Մօտ 2,000 հայ պարսկական սահմաններէն արշաւեր են թիւրքականները, ու 200-ի չափ քիւրդ կին և տղայ կոտորելէ յետոյ, ետ մղվեր են կորուստներով։ Սոսկալի խժդժութիւններ գործեր են հայերը. կտրեր են կիներուն ծիծերը, փորեր են տղաներու աչքերը։ Սա հեռագիրը, թիւրքական աղբիւրէ, մաթեմատիկական ճշդութեամբ կը թուէ ամեն հասակէ և սեռէ խոչտանգվողներու և սպանվողներու թիւը։ Ընդունված ճշմարտութիւն է, թէ երբ թիւրքերը թուաբանական ճշդութեան կը դիմեն, կը գլտորեն տարակոյսի չենթարկվող սուտ մը։ Ճշդութիւն և թրքութիւն այնքան իրարու անհաշտ են, որքան քրիստոնէութիւն և իսլամութիւն։

Արդարև պարսկական սահմանագլխի վրա ծանր դէպքեր պատահած են, կամ կը շարունակեն տեղի ունենալ. ճշդրիտ տեղեկութիւնները դուք մենէ առաջ կրնաք իմանալ։ «Մշակի» 86 և 87 թիւերը երբ այստեղ հասան, նոյն միջոցին և ստացանք Հեքքեարիի դէպքերուն հեռագիրները. «Մշակը» առաջնորդեց մեզի եղելութիւններուն վրա որչափ հնար է մօտաւորապէս ճիշդ դաղափար կազմելու։ Հարկ չեմ տեսներ ուրեմն հաղորդել հեռագիրներուն պարունակութիւնները, որոնք շատ անգամ իրարու ալ կը հակասեն։ Կասկած մը կայ Անգլիոյ մամուլին մէջ, թէ Հեքքեարիի յարձակումը քրդական գործ մըն է գլխաւորապէս, և թիւրք կառավարութիւնը կը վերագրէ հայերուն, որպէս զի արդարացնէ գործադրած կամ գործադրելիք խիստ միջոցները։ Միայն «Թայմզի» հեռագիրը ամբողջապէս առաջ կը բերեմ։

Կ. Պոլիս, օգոստոս 14

«Պարսկական սահմանագլխէն Հեքքեարի տեղի ունեցած արշաւանքը մեծապէս չափազանցուած է, և իր ընոյթը սխալ ներկայացուած։ Յարձակում գործող խումբը կազմված էր պարսիկ թափառաշրջիկներէ, որոնց միացան սակաւաթիւ հայեր ալ։ Բաւական ակներև է, թէ Դուռը ինչ կէտ նպատակ ունի այս պատմութիւնը խոչորացնելով ու խարդախելով։ Կը կարծէ թէ ատով պիտի արդարացնէ հայերուն ոչ մէկ բան տալու քաղաքականութիւնը, որ յուսահատութեան կը մղէ հայոց պատրիարքը։ Դրան վերջին զործն է նահանգային իշխանութիւններու տրված հրամանը չի թոյլատրել հայ որբանոցներու կառուցումը կամ բացումը»։

Այս հեռագրէն պարզ կերևի, թէ պարսկական սահմանագլխին վրա կատարված դէպքերը, ինչ հանգամանքով ալ ըլլան, պիտի ծառայեն Դրան շահերուն։ Եւ կառավարական բերան «Սթանդարտ» չի վարանիր յայտարարելու, թէ «պիտի չի զարմանաք լսելով Վանի քանի մը հայ գիւղերու ջարդը, կամ մինչև իսկ Վանի մէջ կոտորած մը։»

Այս գործերուն վրա «Սթանդարտ» երեքշաբթի օգոստոս 5/17-ին կը հրատարակէր հետեւեալ հեռագիրները, որոնք իրեն սեփական են.

Վիէննա, երկուշաբթի գիշեր

«Հայերը ծանրապէս յուզված վիճակի մէջ են, որովհետև սիւննի քիւրդ հաղարաւոր ընտանիք Պարսկաստանէն վերջերս Վան փոխադրվելով՝ հոն հաստատվեցան. ասոնք իրենց հարևան հայերուն դէմ ամենաթշնամական ընթացքին կը հետևին։ Պարսկաստանէն թրքական հողը արշաւող զինված հայերուն համար Թիւրքիոյ մայրաքաղաքէն կը հաղորդվի, թէ երկու ամիս առաջ Դուռը տեղեկանալով այս արշաւանքի խորհրդին, խնդրեց ռուսական կառավարութենէն, որ իր ազդեցութիւնը բանեցնէ Թէհրան զայն արգելելու համար»։

Կ. Պոլիս, շաբաթ.

«Վանէն և Մուշէն հասած տեղեկութիւնները ցոյց կուտան, թէ տեղական իշխանութիւնները ամեն ջանք կը գործադրեն արգելելու համար քրիստոնեաներու և իսլամներու միջև ընդհարում մը, ու ասոր համար հրապարակային հաշտութիւն մը կարգադրեցին քիւրդ և հայ երևելիներու միջև։ Եւ սակայն ամենայն արագութեամբ զինուորական ուժեր կը հաւաքուին, և չատ մեծ վախեր կը տիրեն։ Հայ յեղափոխականներուն Պարսկաստանի կողմէն արված քաջալերութեանը համար մեծ զայրոյթ կը տիրէ, և խիստ ծանուցագիր մը զրկվեցաւ պարսկական դեսպանին»։

—

Ուրիշ հեռագիրներ ալ կը հաղորդեն, թէ թրքական կառավարութիւնը Հայաստանի արևելեան նահանգներուն մէջ զինուորական զօրութիւնը չարժուն վիճակի մէջ կը դնէ։

Անգլիական մամուլը կը բաւականանայ առայժմ այս դէպքերուն հեռագիրները միայն հրատարակելով, առանց խմբագրական խորհրդածութիւններու. անշուշտ կը սպասէ աւելի ստոյգ տեղեկութիւններու, կամ թէ խոյս կուտայ չափազանց կարևորութիւն ընծայելէ։

—

Մինչ այս հեռագիրները քանի մը օրէ ի վեր իրար կը յաջորդէին, ահա այս առտու Կ. Պոլսէն և Վիէննայէն հասած հեռագիրներ կը ծանուցանեն, թէ երէկ Պոլիս դէպքեր տեղի ունեցեր են։ Ռումբ մը արձակուեր է Ղալաթա-Սէրայի պահականոց—ոստիկանատան վրա, առանց վնաս մը հասցնելու. հայ մը, տարապիղծնցի Կարապետ, Ռուսիայէն 3 օր առաջ եկած, ձերբակալվեր է այն պահուն, երբ ռումբով Պանք Օթոման կը մտնէ եղեր, և ռումբ մը պայթեր է Դուռը, սադրազամին սենեակին տակը, ու քիչ չատ վնաս հասցուցեր է։

Այս տեղեկութիւնները ուղղակի Պոլսէն կը հասնին, հետևաբար թիւրք կառավարութեան քննութեամբը միայն թոյլատրված են։ Զենք դիտեր, թէ ինչ եղած է Պոլիս. «Թայմզ» միայն կակնարկէ, թէ «վնաս և մարդու կորուստ համեմատաբար քիչ է», ինչ որ կասկածել կուտայ թէ դժբաղդութիւններ կրնան պատահած ըլլալ։ Թերթերն ընդհանրապէս լուռ կը մնան. միայն քանի մը մեծ թերթ համառօտ խորհրդածութիւններ կընեն, հայոց անհպատաս։ «Թիւրքերը, կըսէ «Սթանդարտ» խմբագրականի մը մէջ, այն տեսակ ժողովուրդ չեն, որ անտարբեր մնան այս տեսակ գործի մը, ու ոչ ոք պիտի զարմանայ, երբ վրէժխնդրութեան լուրը առնէ»։—Ահա լեղու մը, որ չատ չարագուշակ է, և այժմէն կրնանք մեծ-մեծ վախեր զգալ պատահածներուն կամ պատահելիքներուն մասին։

***

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թ ա ւ ր ի զ, օգոստոսի 10-ին

Մի քանի օր առաջ Սալմաստի սահմանի վրա տեղի ունեցած դէպքերի պատճառով, հիւպատոսական խորհուրդ կազմվեց այստեղ և ռուսաց ու օսմանեան հիւպատոսները ներկայացան Ամիր-Նիզամին։ Թէ ինչ է խօսվել կամ վճռվել, որոշ յայտնի չէ, միայն խօսվում է թէ ռուսաց հիւպատոս Պեարով, ի միջի այլոց, Ամիր-Նիզամին կատակով մի չատ գեղեցիկ հարց է տուել ու պատասխան ստացել։

—Ի՞նչ էք անում դուք մարդասպաններին, ձեր կառավարութեան օրէնքով։

—Մենք մարդասպանին կը սպանենք, պատասխանել է Ամիր-Նիզամ։

—Այդ հայերն էլ նոյնն են արել, մարդասպանին սպանել են։

Պարսից կառավարութիւնը միջոցներ է ձեռք առել Սալմաստի խառնակ դրութեան վերջ տալու համար, սակայն այդ միջոցներն աւելի ազդեցութիւն են եղել Սալմաստի համար։ Շահզադէն հեռագրել էր Ամիր-Նիզամին, թէ դէպքերին վերջ տալու և միանգամ ընդմիշտ մեր խաղաղութիւնը չը վրդովելու համար պէտք է բոլոր հայերին դաղթեցնել Սալմաստից մի ուրիշ տեղ և այնտեղ բնակեցնել թուրքերին. իսկ Շահի հրամանն է, որ առաջնորդական տեղապահը Սալմաստ գնայ և վերջ տայ այս խռովութիւններին, սակայն տեղապահը Ղարադաղից դեռ չէ վերադարձել։ Այս պատճառով հայերի կողմից Ամիր-Նիզամին դիմում եղած ժամանակ, մէկը հետևեալ խօսքերով դիմել էր նրան.

—Տէր, եթէ Սալմաստի հայերից մէկը միայն յարձակում է գործել քիւրդերի վրա, առաջինն իմ պարանոց պատրաստ է քո սրի առաջ։

—Մենք գիտենք, որ պարսկահպատակներ չեն եղել, ասել է Ամիր-Նիզամը, սակայն մենք երեխաներ չենք, որ մեզ խաբէք։ Ո՞վ է եղել այդչափ մարդկանց կերակրող ու տուն տուողը։ Վեհափառ Շահի հրամանն է, որ «խալիֆան» Սալմաստ գնայ և պատուիրէ սալմաստցիներին, որ եթէ երկրորդ անգամ տեղ տան կաչաղներին, մեր կառավարութիւնը անխնայ կերպով պիտի սրի անցնէ այդ գաւառը։

Սալմաստում այժմ հաւաքում են բոլոր դաղթականներին և լցնում բանտերը։ Այս մասին Ամիր-Նիզամը ասած է եղել թէ դաղթականներին պիտի ճամբենք Ղարադաղ։ Եթէ իրագործվի, իսկապէս ցաւալի կը լինի դաղթականների վիճակը։ Ղարադաղ մի այնպիսի տեղ է, որ մի ափ հող անգամ չը կայ մշակելու, եղած ցանքը տեղացիներին բնաւ չէ բաւականանում, ուր մնաց հաղարաւոր գաղթական ընտանիքներին։ Սալմաստում հողն առատ է և երկրագործ դաղթականը կարող է իրան հիւրընկալողին օգնել վաբելիս, ցանելիս ու հնձելիս ու ինքն էլ փոխադարձաբար կերակրվել նրա սեղանից։

Չը մոռանանք ասել, որ Խոյի, Սալմաստի օսմանեան փոխ-հիւպատոս Բիզա-բէյը պարսից սարքաղներին գրգռել է, որ անցնեն Թիւրքաց հողը և կոտորեն հայերին։ Ամիր-Նիզամ այստեղ օսմանեան հիւպատոսին իր մօտ կանչելով իր դժգոհութիւնն է յայտնել։ Անշուշտ Բիզա-բէյը հրահանգված է Բ. Դռնից։

Ս—ցի

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

—

Պ օ ս տ օ ն, օգոստոսի 2-ին

Երկու շաբաթի չափ առաջ հեռագիրը աւետեց, թէ Բլօնդայք գաւառի մէջ, Եուքօն գետի ափերը հրաշալի քանակութեամբ ոսկի գտնուեր է։ Դեղին մետաղի պարկեր շալկած հանքագործներու գալուստը հաստատելով այս լուրը՝ պաշտելի մամոնային սիրով թրթռացուց միլիոնաւոր սրտեր։ Ոսկիի տենդը համաճարակի պէս տարածուեցաւ. այս երկու շաբթուն միջոցին հաղարաւորներ՝ թող տուած գործ, ընտանիք, զբաղում դէպի Ալասքա կը վազեն՝ մի քանի շաբթուան մէջ միլիոնատէր դառնալու յուսով։ Աւատպելական հարստութեանց այդ հայրենիքէն դրած նամակները սակայն չատ վարդագոյն չեն նկատեր արդի ոսկէ գեղմի հետամտողներու կեանքը։ Տարին միայն 100 օր կարելի է գործել, կըսեն, մնացած 265 օրը ամեն բան սառած է. սոսկալի ցուրտ մը և բարձր լեռներ տարուան մեծ մասին մէջ հաղորդակցութիւնը, եթէ ոչ անկարելի, դէթ չատ դժուար կը դարձնեն այդ ձիւնային անապատներու մէջ, մանաւանդ որ ոսկիի հանքերը բնակութենէ հարիւրաւոր մղոններ հեռու կը գտնուին։ Ոսկիի փոշի, կամ խոշոր կորիզներ գտնէն հանել փափաքողները ուրեմն չատ գործ պիտի ունենան ձիւնի և սառի հետ. չատեր փոխանակ հարստութիւն մը հանելու երկրին երեսը՝ իրենք պիտի պառկին ոսկերեր ժայռերու կողը գետնին տակ։ Սակայն ոչ մի դժուարութիւն չէ կարող կեցուցնել ոսկիի եռեռն վազողներուն արշաւանքը. ընկերութիւններ, խումբեր իրարու հետ կը մրցեն. թիթեղէ տուփերուն մէջ դրուած միս, բանջարեղէն և այլն կը գնուի անդին քանակութեամբ. մի քանի տուներ իրենց տարիներու միջոցին ծախել չը կըրցածէն աւելի ծախեցին այդ ապրանքներէն Ալասքա դիմողներուն։ Վերջին մի քանի օրերը չոր մսի և այլ ուտելիքներ կրող անհամար չոգեկառքեր պաշարի առդին ամբար մը դիզած են վերջին կայարանը այս ոսկոյ խաչակիրներու բանակին համար։ Այս կողմերէն ալ գնացողներ

չատ եղան, բայց համաձարակը չատ աւելի զօրաւոր է արևմուտքի մէջ, նոյն իսկ կիներ ու մանուկներ ալ կը մատնակցին արշաւանքին: Մի ուրիշ խումբ ալ կը պատրաստուի անմիջապէս գտնուած ոսկին խլել հանքագործին ձեռքէն. այդ կարգին կը վերաբերին ոգելից ըմպելիք ծախողներ, խաղարաններ, անպարկեշտ տուներ հաստատողներ, որոնք իրենց կարգին կը փութան դէպի ոսկիի երկիրը՝ նոյն իսկ ամենէն նուազ բարեխառնութեան տակ չարունակելու իրենց անպատիւ առեւտուրը: Եթէ Նանսէն Հիւսիսային բևեռին ծով լինելը ապացուցանելու տեղ ոսկիի հանքերու գոյութիւնը հաստատէր, հաւատացէք, որ տարին չը բոլորած հիւսիսային բևեռը մարդաբնակ պիտի դառնար:

Արմէն

ՆԱՄԱԿ ԲՈԼԳԱՐԻԱՅԻՑ

Սիլիսարիա, օգոստոսի 3-ին

Ուղեւորութենէս օգտուելով, առիթ ունեցայ ծանօթանալու Ռումանիոյ ամենայարգի հնագիտական վայրին, Ադամկլիսի, որ կը գտնուի Դանուբի աջակողմ՝ Ռումանիոյ Դոբրուջա երկրին մէջ, դէպի հարաւ 15 կիլոմէտր հեռուն Ռասովա գիւղէն:

Զէրնավոդայէն դէպի Ռասովա գալու ժամանակ կը հանդիպինք մի դիւղի, Կոկիրլէն, որ կը գտնուէր Ռասովայէ քիչ մը վար, Դանուբի եզերքայ վրա տարածուած հովի մը մէջ: Կը տեսնուէր ասա հռովմէական նշանաւոր շինութիւն մը, Տրայիանոսի պատանէշն, յիրմէ կառուցեալ մինչեւի Կոնստանցա *), ծառայած լինելով իբր պաշտպանութեան պատնէշ Միզիոյ՝ ընդդէմ հիւսիսային բարբարոսաց: Այժմ մնացորդը միայն կը տեսնուին նշանաւոր շինութիւնէս, Դանուբի եզրէն սկսեալ մինչեւ Կոնստանցա:

Երբ կը հասնինք ի Ռասովա, ասա պատեհութիւն ունեցանք հայազգի մը շնորհիւ ծանօթանալ պրոֆէսոր Դր. Ա. Տօչիլէսկուի (Prof. Gr. A. Tocilesco) հետ, որ կառաջնորդէր ուսանողաց խումբ մը դէպի այս հնագիտական վայրն: Խմացանք նաեւ, թէ նոյն ինք պրոֆէսորն կը հետաքրքրէր զայս հնագիտական վայրն տասնեակ ամերէն ի վեր, տարեկան ծախսելով մօտ 10.000 ֆրանք. ըստ որում ընկերացանք յարգելի պրոֆէսորին, հնագիտական համալսարանին Բուկարէշտի, որ միանգամայն էր գլխաւոր վարիչն ազգային թանգարանին և թղթակից անդամ խել մը գիտական ընկերութեանց Եւրոպիոյ:

Կը հասնինք յԱդամկլիսի: Ասա յարգելի պրոֆէսորին հետաքրքրութեանց գլխաւոր արդիւնքն եղած է՝ 1) վերահաստատել Սաորին Միզիոյ (Moesia Inferior) տեղագրական հին սահմաններն. 2) գտնել երեք մեծ գծեր ամրութեանց, ակօսելով զգաւառն. 3) հաւաքել վեց հարիւրէ աւելի հին արձանագրութեանց հաւաքածոյ մը. և 4) վերջապէս, սկսել ի լոյս բերել Troparum Trajani անուամբ կոչուսեալ հին քաղաքին մեծագոյն մի մասն, որ այժմուս Ադամկլիսին է: Տրայեանոսի ժամանակ՝ գաւառին ամենակարեւորներէն մին եղած է վայրս, որ հասած է ինքնօրէնութեան աստիճանին և սահմանագլխոյ առաջին բերդաքաղաքն եղած է:

Քանի մը տարիներ առաջ՝ կային միայն աւերակաց կոյտ մը և քարերու մեծ կարկառակոյտ մը. տեղւոյն անունն իսկ անծանօթ էր: Ոմանք կը կարծէին զայս քառակոյտն լինել՝ Դարեհի ժամանակէն մնացած պարսկական հրաշակերտութիւն մը. ուրիշներն ալ կը կարծէին, թէ հռովմէացի զօրավարի կամ պետի մը գերեզմանն էր: Բայց սոքա լոկ ենթադրութիւններ էին, որք անյայտանալով առին ատոյգ կերպարան մը, ի շնորհս գիտնական պրոֆէսոր Տօչիլէսկուի, որ լուսաբանած է վայրին պատմականն և, միանգամայն, ի լոյս բերած է նորա կարգ մը ամենանշանաւոր հրաշակերտութիւններն: Իր պլանն կը գծէր $10^1/_2$ հէկտար (մէկ հէկտար 10,000 քառակուսի մէտր է) տարածութիւն ունեցող քաղաք մը, շրջապատեալ՝ տեղւոյն հանգամանաց համաձայն կառուցեալ որմերով, և ամրացեալ 36 ռազմաբուրդերով կամ ժարակոցներով, որոյ 12-ն արդէն գտնուած են: Այս տեղեր կը տեսնուին 3 դռներ, որոց երկուքն են մեծագոյն և կը գտնուին արևելեան և արևմտեան կողմերն, և միւսն՝ աւելի փոքր և հարաւային կողմն: Գլխաւոր փողոցն յատակուած է սալաքարով, մէջտեղն երկու արուակներով, որոց մին կառուցած է ջրոյ փոխադրութեան և միւսն կոյուղւոյ համար: Այս մեծ փողոցին աջ և ձախ կողմերն կը գտնուէին մեծ չէնքեր,— հոս բաղնիկօս մը, հոն բիւզանդեան կաթողիկէ մը՝ ունենալով մի ընդերկրեայ դամբանարան խորանին ներքև, և պարունակելով գեղեցիկ միւսիոն մը:

Քաղաքին վերաշինութեան մի ապացոյցն ակներև է: Չի կան արձանագրեալ կարգ մը քարեր, որ իբր շինուածանիւթ գործածուած են. զայս հաստատող կար ուրիշ ապացոյց մ'ալ, որ 316 թ. ախոյեանի մը արձանագրութիւնն էր՝ հանդերձ մանրամասնութեամբք ի վերայ պատմական կողման գաւառին: Քաղաքն հաստատած է Տրայիանոս կայսրէն. ընդունած է ինքնօրինութեան իրաւունքներն III-րդ դարու վերջերն և, հաւանօրէն, կործանուեր է գոթացիներէ: Կոստանդիանոս կայսրն և իր դաշնակից Լիցինիոս կը պատերազմին բարբարոսաց հետ և «կը վերաշինեն Troparensium» քաղաքն իր հիմունքներէն սկսելով»: Վերոյիշեալ ախոյեանն (Trophaeum) կը կայանար 2 մէտր 65 բարձրութիւն ունեցող կրաքարէ մը. նա միայն չեղած է յաղթանակային ախոյեան մը, այլ նաև ծառայած է իբր զինանշանք քաղաքին:

Բաղում տարիներ դեռ պէտք պիտի լինին՝ այս վայրն շարունակ պեղուելով՝ քաղաքն ամբողջովին ի լոյս բերուելու համար, ուր կը խոստանայ լինել երկրորդ Պոմպէյա կամ Հերկուլանոն մը: Պրոֆէսոր Տօչիլէսկուի անխոնջ աշխատանաց շնորհիւ, մեծ կարկառակոյտն չէ այլ ևս մի հանելուկ. թուականն և նպատակն ի յայտ բերուած են և հոյակապ չէնքն՝ որ կը պարունակէ նշխարներն, նկարագրուած և տպագրուած է խուզարկուին «Ադամկլիսի հոյակապ շինութիւն» *) վերնագրեալ մի մենագրութեանը (monographie) մէջ: Միով բանիւ՝ հսկայական ախոյեան մէ, որ կառուցեալ ի Տրայիանոս կայսրէն՝ Դաչիացւոց (Daces) վրա 108—100 թ. տարած յաղթանակէն վերջ: Նուիրուած է Արէսին (Mars), և ճարտարապետն եղած է հռչակաւորն Ապոլլոդորոս (Apollodorus) դամասկոսցի (60—125 թ.):

Այստեղ, պրոֆէսոր Տօչիլէսկու գտած է ուրիշ հոյակապ շինութիւն մ'ալ, որ իր տեսակին մէջ անման է հնագիտական աշխարհին մէջ: Ասի՝ Տրայեանոսէն կառուցեալ մօսոլիոն մէ, ի յիշատակ այն զինուորաց, որք մեռած էին այս պատերազմին մէջ, ուր կայսրն ինք ևս մասնակցած էր:

Շէնքն քառանկիւնաձև է և բարձրացած 5—6 աստիճանով միահարթ տանիքի մը վրա. կը կրէ բաղմաթիւ մանր տախտակներ, ուր գրուած կը գտնուին հռովմէացի քաղաքացւոց անուանքն, որպէս նաեւ անուանքն օտար երկրեր ճամբորդող այն անձանց՝ որք անկան այս պատերազմին մէջ: Այս արձանագրութիւնը չատ հետաքրքրական են, և կը պարունակեն մանրամասնութիւններ հռովմէացի զօրաց ընակարանին վրայօք, ինչպէս նաև օտար զօրաց ծագմանը վրայօք:

Մօսոլիոնն ունէր այն ձևն, ինչ ձևով արդէն կը տեսնուէր նկարուած Անատոլիոս Ռիոսի և Յուլիա Դոմնայի մեռելներուն վրա: Եւ պրոֆէսոր Տօչիլէսկու այն կարծիքին էր, թէ այս մեծ ախոյեանն կառուցեալ էր դարձեալ Տրայեանոս կայսրէն, թէև պատերազմն գլխաւորաբար Դանուբի հիւսիսակողմն կատարուած լինէր: Այս պատերազմն յիշատակեալ կը գտնուի Տրայիանոսի Սեանը վրա, ի Հռովմ:

Այս բոլոր տեղեկութիւնք տրուեցան ինձ յարգելի պրոֆէսորէն, ուստի յայտնելով շնորհակալիք տուի հրաժեշտի ողջոյններս: Հիացած և զքանչացած եմ տեսնելով թէ յարգելի պրոֆէսորն ինչ ոգեւորութեամբ ամբողջ ամբոխը, չը նայելով անձրևին, կանգնած էր ամբողջ ճանապարհի վրա: Ցերեկվայ 2 ժամին Ֆօր ճանապարհ ընկաւ դէպի Պարիզ:

*) Das Monument von Adamklissi. Wien, Hölder, 1896, Folioformat.

*) Կոնստանդա կամ Կէօստէնջէ, Ռումանիոյ ամենաբանուկ նաւահանգիստներէն մին, կը գտնուի Սև Ծովուն վրա և Դոբրուջա: Զէրնավոդային հետ միացած է երկաթուղով մը 1860 թ. իսկ Բուկարէշտի հետ միացած է, դարձեալ երկաթուղով մը, 1895 թ. կառուցուած: Զէրնավոդայի դանուելեան „կարոլ I" կամրջին շնորհիւ ի դէպ՝ երբ Զէրնավոդա—Կոնստանցա գիծն կը կառուցուէր, վերջնոյս մէջ յատնական և հռովմէական արձանագրութիւններ գտնուելով՝ քաղաքին հնութիւնքը վրա տուին մեծ նշանակութիւն մը: Ըստ որում հին ատենուան Tomi քաղաքն լինել կը թուէր, ուր Ց. Ք. 9 թ. աքսորուած և մեռած է լատին Օվիդիուս (Ovidius) բանաստեղծն, ի յիշատակ որոյ այժմ կառուցեալ է արձան մը:

*) Das Monument von Adamklissi. Wien, Hölder, 1896, Folioformat.

սօրին ընկերակցող ուսանողը՝ իրենց մատուցած կէս-անհետացած լատիներէն արձանագրութիւններն՝ Ինչպիսի պատմական հմտութեամբ և հնագիտութեամբ կընթեռնուին և, նոյնժամայն, կը սփռէին լոյս կորուսեալ քաղաքին վրա:

Ակաբի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բոլգարական մամուլի մի մասը չափազանց դրդռված է Ֆերդինանդ իշխանի և Սոֆիլովի դէմ, որ թոյլ տուին իրանց ստորանալ սուլթանի առաջ և արատաւորել Բոլգարիայի անունը: Մանաւանդ բոլգարական չքանչաններ տալը թիւրը մինիստրներին՝ նախատական է համարվում այն պատճառով, որ այդ թիւրը մինիստրների կարգադրութեամբ Մակեդոնիայի բոլգարները ենթարկվում են ամեն տեսակ հարստահարութիւններին:

—Բերլինի լրագիրները հաղորդում են. «Յունաց կառավարութիւնը յայտարարեց մեծ պետութիւններին, որ 2 միլիոն ֆրանկից աւելի պատերազմական տուգանք վճարել չէ կարող:»

—Ամէնքում ցոյցեր են լինում, որոնցով պահանջվում է վերանորոգել պատերազմ թիւրքիայի դէմ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պետերբուրգի մի քանի լրագիրների մէջ հարց է յարուցված հանդանակութիւն բանալ, և «խաղաղութեան» բրօնզեայ արձան կանգնեցնել Նեվայի ափերում, ի յիշատակ Ֆելիքս Ֆօրի Ռուսաստան գալու:

***

Բերլինի պոլիցիական ցենզուրան այս օրերս մի քաջագործութիւն կատարեց. արգելեց յայտնի գրող Զուդերմանի մի նոր դրամայի ներկայացումը: Հասարակաց կարծիքը վրդովված է ցենզուրական այդ անտեղի վարմունքի դէմ:

***

Այս վերջին օրերը Թիֆլիսի փողոցներում ընդհանուր հետաքրքրութեան առարկան՝ օտար բժիշկներն են, որոնք իրանց հագուստով և արտաքինով առանձին ուշադրութիւն են գրաւում: Մեր օտար հիւրերը մեծ ուշադրութեամբ պրպտում են քաղաքի զանազան կողմերը, գլխաւորապէս հին ասիական մասը, և առնում են արեւելքին յատուկ իրեր, զգեստներ, գործիքներ և այլն: Երեի եւրօպացի ճանապարհորդները ասիական նորութիւնների մեծ ժողովածու կը տանեն իրանց երկիրը: Կարող ենք արդեօք յուսալ, որ տեղացի առևտրականները, մանաւանդ թիւրքերը մի քիչ քաղաքավարի կը լինեն և անխիղճ կերպով չեն խաբի անծանօթ ճանապարհորդներին:

***

Սուլթան Աբդուլ Համիդը իր մեծահոգութիւնը և ազատամտութիւնը հայտնել է մինչև այնտեղ, որ երկու նաւ լի հրավառութեան նիւթեր և փամփուշտներ է ուղարկել Ֆերդինանդ իշխանին, որպէս զի բոլգարական քաղաքները մեծ հանդէսով և շուքով տօնեն օգոստոսի 2/14 օրը, որ Բոլգարիայի թիւրքայ լծից ազատվելու տարեդարձի օրն է:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՎԱՐՇԱՎԱ, 20 օգոստոսի: Թագաւոր կայսրը և Թագուհի կայսրուհին ժամանեցին օգոստոսի 19-ին, երեկոյեան $5^1/_2$ ժամին: Բոլոր տաճարների զանգակները սկսեցին ածել, և մեծ տօնախմբութիւն սկսվեց: Ժողովրդի բազմութեան շարքերը կարգաւորվում են, երաժշտական խմբերը օրհներգ են ածում, լսվում է խլացուցիչ աղաղակ, երևում է կառքը Օգոստափառ Զոյգով: Գլխարկները վեր են բարձրանում, գլուխները խոնարհվում են: Ողորմութիւն: Նոցա Մեծութիւնները ողորմած կերպով ողջունում են, և կառքը անցնում է ուրախութեան այդ աղաղակների ժամանակ: Երկրորդ կառքով անցնում են Մեծ Իշխանները, որոնց ժողովուրդը ընդունում էր ուրախութեան բացականչութիւններով: Աղաղակների նոր փոթորիկ սկսվեց, երբ անցնում էր կառքը Օգոստափառ Երեխաներով: Բոլոր դէմքերի վրա ուրախ արտայայտութիւն է երևում:

ՄՕՍԿՎԱ, 20 օգոստոսի: Այսօր ֆրանսիացիները պսակ դրին Պուշկինի արձանի վրա, և այդ ժամանակ ֆրանս-ռուսական ցոյցեր եղան:

ԴԻՒՆԿԻՐԽԷՆ, 20 օգոստոսի: Ֆօր և Հանօտաւ այստեղ ալ իջան: Մէլին, Բէնար և Բիլիօ եկան դիմաւորելու նախագահին: Մէլին շնորհաւորեց ճանապարհորդութեան աջող ելք: Ժողովուրդը ողողված կերպով ողջունեց նախագահին: Առևտրական ատեանը և հիւանդանոցն այցելելուց յետոյ Ֆօր գնաց քաղաքային խորհրդի կողմից կազմած բանկէտին: Բազմաթիւ ողողված ամբոխը, չը նայելով անձրևին, կանգնած էր ամբողջ ճանապարհի վրա: Ցերեկվայ 2 ժամին Ֆօր ճանապարհ ընկաւ դէպի Պարիզ:

ՎԱՐՇԱՎԱ, 21 օգոստոսի: Երեկոյեան Վարշավայի բոլոր փողոցներում գեղարուեստական հրավառութիւն կար: Ժողովրդի բազմաթիւ ամբոխ զբօսնում էր լուսավառված փողոցներում, դիմելով դէպի Լազենկովեան պալատը, ուր Վարշավայի խորհրդարանական ընկերութիւնը մի ուրիշ ընկերութեան հետ սերենադա տարբեցին պալատի աւագանի վրա: Թիւերի վրա նստած, թիավարները գեղեցիկ երգում էին: Թագաւոր Կայսրը շնորհակալութիւն յայտնեց այդ հանդէսին բոլոր մասնակցողներին:

Օգոստոսի 20-ին, առաւօտեան 10 ժամին, Թագաւորը և Թագուհին, Վլադիմիր Ալէքսանդրովիչ և Պավէլ Ալէքսանդրովիչ Մեծ Իշխանների և սվիտայի անձանց ուղեկցութեամբ, ժամանեցին ս. Երրորդութեան մայր տաճարը: Տաճարում հաւաքված էին Վարշավայի միջնակարգ և տարրական դպրոցների աշակերտուհիները և աշակերտները: Տաճարը մտնելու ժամանակ Նոցա Մեծութիւններին դիմաւորեց Վարշավայի արքեպիսկոպոսը—վարդապետներով և ամբողջ հոգեորականութեամբ: Արքեպիսկոպոսը ողջունեց Նոցա Մեծութիւններին մի ճառով: Այս տաճարում մաղթանք լսելուց յետոյ, Նոցա Մեծութիւնները այցելեցին նոր չինվող տաճարը և զօրքերը տեսնելուց գնացին Լազենկովեան պալատը, ուր տեղի ունեցաւ Բարձրագոյն նախաճաշ:

Լազենկովեան պալատում ցերեկվայ մօտ 4 ժամին հաւաքվեցին, ներկայանալու Թագաւորին և Թագուհուն, հոգեորականներ, պալատական և քաղաքացիական պաշտօնեաներ, օտար պետութիւնների ընդհանուր հիւպատոսները և Նոցա Մեծութիւնների Վարշավան այցելելը յաւերժացնելու նպատակով բարեգործական մի հաստատութիւն հիմնելու համար նուիրատուութիւններ հաւաքող կոմիտեի անդամները: Կոմիտեի գլուխ կանգնած էր մարկիզ Վելեպոլսկի, որը մի ճառ խօսելով, հաղորդեց, թէ ազգաբնակութիւնը միլիոնաւոր ղրամագլուխ է հաւաքել բարեգործական մի գործով յաւերժացնելու Նոցա Մեծութիւնների գալուստը Վարշավա: Թագաւորը շնորհակալութիւն յայտնեց բոլորին ընդունելութեան համար: Ցերեկվայ 5 ժամին նոյն դահլիճում տիկինները ներկայացան Թագուհուն:

Այսօր, երեկոյեան, երեկոյթ է նշանակված ընդհանուր նահանգապետի մօտ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

—

ԲԱԳՈՒ. Ա. Տ.—Գ. Ձեր ցանկութիւնը յայտարարութեան վերաբերմամբ կը կատարենք:

ԲՕԺԻ-ՊՐՕՄԻՍԼԷ. Բժ. Տ. Խ. «Братская Помощь» գրքի համար ուղարկած 5 բուբլին յանձնեցինք կենտրոնական գրավաճառանոցին:

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՆ. Անչափ շնորհակալ կը լինենք մեր թղթակիցներից և առհասարակ բոլոր յօդուածագիրներից, եթէ իրանց թղթակցութիւնները և յօդուածները գրեն մի երեսի վրա, փոխանակ գրելու երկու երեսի վրա, ինչպէս գրվում են սովորական նամակները: Մի երեսի վրա գրած յօդուածները անհամեմատ աւելի հեշտ են ուղղվում և տպարանում էլ՝ չարելու մեծ յարմարութիւն կունենան:

Կ. ՊՕԼԻՍ. Շ. Շարունակեցէք. խնդրում ենք, թղթակցութիւններ ուղարկել Կ. Պօլսից:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԻԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆՔ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ. Վելիամինովսկայա փողոց, № 12 Իվան Սոզոմենանց:
(№ 96) 2—3

Բացված է բժշկարանութիւն
ՐԱՖՖԻ
ՍԱՄՈՒԷԼ
Ա. Բ. Լ. Գ. դեռք
ԳԱՒԻԹԲԷԿ
Ա. Բ. Լ. Գ. դեռքը վերջաբանով
և
ԿԱՑԾԵՐԻ
Լեհատառ երկրորդ հատորներ.

Առանձին 2 ր. 50 կ. երեքը միասին 6 ր.
Լոյս տեսնելուց յետոյ . . . . . 10 ր.
Տպագրութիւնը լինելու է Եւրոպայում ամենաշքեղ կերպով:

Հեղինակի վաճառելի երկերը ստանալու համար դիմել.—ТИФЛИСЪ, Аршаку Раффи. արտասահմանի համար. M me Raffi. 26 Loftus Road, Sherherd's Busf. LONDON W.
(№ 97) 1—5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 *ժ. առաջի, ներքին և նեարդային հ.*

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 *ժ. կանանց և երեխայոց հ.*

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ *ժ. ներքին և երեխայոց հ.*

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—12½—1½ *ժ. ներքին, ականջի, կոկորդի և մրզասեռական հ.*

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Մ. ՓՈՂԻՆԵԱՆ—6—7 *ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ.*

Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ *հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է առնում մէզի, խիպ, արեան, կաթի և այլն։*

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Ի տեղի հիւանդանոցի վերատեսչի՝

Բժ. Ա. Գ. ԳՈՒՐԿՕ

ՄԻ ՊԱՏԻԱՒՈՐ ԸՆՏԱՆԻՔ

Ընդունում է երկու փոքրահասակ աշակերտներ կամ աշակերտուհիներ՝ կերակրելու և խնամելու, ձեռնտու պայմանով։ Մաքուր և առողջարար բնակարան։ Կատարեալ հոգատարութիւն։ Հարցնել Ալիխանովի մագազինում, Լօրիս-Մելիկովսկայա և Բարօնսկայա փողոցների անկիւնում։

(№ 93) 4—5

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ

հոգաբարձական խորհրդարանում օգոստոս ամսվայ 27-ին, երեկոյեան 8 ժամին, լինելու է ԱՃՈՒՐԴ (առանց կրկնաձրդի) կապալով տալու դպրոցի պատկանեալ 21 կրպակները, որոնք գտնվում են Ներսիսեան հին դպրոցի հանդէպ։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամենայն օր, բացի կիրակի և տօներից, առաւօտեան 10—12 ժամն։

(№ 96) 2—3

УЧИЛИЩЕ И ПАНСІОНЪ

Кол. Ас. Ив. З. ТЕРЪ-СТЕПАНОВА

готовитъ въ гимназіи и др. уч. на бухгалтера. Съ платою въ мѣсяцъ за ученіе отъ 6 р., пансіонъ отъ 15 р. Курсъ бухгалтеріи отъ 25 р. Близъ памятника Воронцова. Елизаветинская, № 30.

(№ 95) 3—8

„ՄԱՄՈՆՑԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԻ“

ցանկացողները ուղղակի կարող են դիմել Մ. Բարխուդարեանին հետեւեալ հասցէով. Москва, Мяс. ул. въ типографію Бархударяна, д. Ермакова.

Իւրաքանչիւր օրինակը արժէ 1 ր. 50 կոպէկ

Ս. Շահապիզանց

(№ 90) 4—5

ԲԱԳՈՒ

Ուսումնարան Ա. Բաքալեանի

Ընդունվում են երեխաներ գիմնազիայի, ռէալական և այլ դպրոցների համար պատրաստելու։

Հասցէն՝ Старо-почтовая *փողոց, տուն Հաջի-Նէյմաթի։* (№ 94) 4—15

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒԻ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական գնահատութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մերկանի կանոնագրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսերը Հիմնադրի բնակարանում, Սօլոլակում, Ալէքսանդր Փրիզօնովի տանը, № 9, Սերգիևսկայա և Նադօրնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի տպէս եղը։ Ծօվիանօվների բանկային դրամատնում և կուրսերը Հիմնադրի բնակարանում։ Օտարազգացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

(և. շ.) (№ 76) 11—25

Մօսկվայում բացված է բաժանորդագրութիւն

ՄՕՏԵՐՍ ԼՈՑՍ ՏԵՍՆԵԼԻ

“БРАТСКАЯ ПОМОЩЬ

ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ“

ԳՐԱԿԱՆ-ԳԻՏՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՀԱՄԱՐ

Ժողովածուի մէջ, է միջի այլոց, զետեղված են՝ ոտանաւորներ՝ Կ. Բ., Ա. Մ. Ժեմչուժնիկովի (լիակատար ֆակսիմիլէ), Ի. Ա. Բելօուսովի, Վ. Գոլովչովսկու, Սավելիէվի, Բալմոնտի, Ֆ. Լ. Կօրշի, Վ. Հէսսէնի, Ա. Լ. Բորովիկովսկու, Ե. Կ. Ալիբէկովայի, Մ. Ի. Զախարնի, Կոշեվիչի, Իվան-դա-Մարիայի, Վ. Գոլովաչէվսկու, Վ. Բէլօուսովի, Կանսոնի, Ալ. Ծատուրեանի, Թումանեանի և ուրիշների։ *Նամակներ*—Բելինսկու, Գերցէնի, Մ. Ե. Սալտիկովի (լիակատար ֆակսիմիլէ), Լ. Ն. Տոլստոյի (լիակատար ֆակսիմիլէ)։ *Պատմուածքներ*—Դ. Ն. Մամին-Սիբիրեակի, Կ. Ս. Բարանցեվիչի, Վ. Դ. Կորոլենկոի, Ն. Ն. Զլատօվրատսկու, Աստախովի, Ն. Դ. Տելեշօվի, Ա. Ա. Վեսելովսկու և ուրիշների։ *Ցոդուածներ հետեւեալ պրոֆէսորների*—Պ. Ն. Մելիուկովի (Դրանովսկու դատախօսութիւնների անտիպ դասընթացը), Ի. Բ. Տարխանովի, Մ. Մ. Կովալևսկու, Կ. Ա. Տիմիրեազեվի, Ա. Ն. Կարիշևի, Վ. Դ. Սպասովիչի, Ն. Ի. Ստորոժենկոի, Վ. Ֆ. Միլլերի, Ա. Ն. Վեսելովսկու, Գ. Ա. Խալաթեանցի, կոմսուհի Գ. Ս. Ռովարովայի, Մ. Ա. Վենեվիտինովի, Մ. Վ. Նիկոլսկու, Գ. Ի. Բանանեանի, Վ. Ա. Գոլցեվի, Բուկվայի, Դիոնէօի, Պ. Ա. Բելոզերսկի, Բարոն Շտակելբերգի, կոմս Լ. Ա. Կոմարովսկու, զեներալ Պոտաոյի, Գ. Ն. Օբոլենսկու, Ա. Ն. Սազոնովի, Ա. Ս. Խախանովի, Զորանեանի, Վ. Ե. Երմիլովի, Վ. Վ. Վերեշչագինի, Իշխան Է. Է. Ուխտոմսկու, Վ. Ա. Գոլմսարէմի, Ս. Դ. Մախալովի, Լ. Զ. Մաերեանցի, Վ. Ե. Երմիլովի, Գ. Ա. Զանչիէվի, Ի. Ա. Վեսելովսկու, Մ. Բերբերեանի և ուրիշների։*

Ժողովածուին կցած կը լինի Ց. Կ. Այվազովսկու չորս ինքնուրոյն նկարները, Վ. Ե. Սուրենեանցի չրջանկարները, աւելի քան 100 տեսարաններ և տիպեր Անդրկովկասի և Թիւրքահայաստանի, հեղինակների ֆակսիմիլէներ, պատկերներ, է միջի այլոց, Բելինսկու, Նրա ընտանիքի, Գրանովսկու, Սալտիկովի, կոմս Լօրիս-Մելիքովի, Բելոզերսկիի, Վ. Ա. Արցիմովիչի, Ս. Ի. Զարուզնոյի, կամուրջիոս Մկրտիչ Ի-ի, հայր Ալիշանի, Ադամեանի, զեներալ Լազարեվի, Տէր-Գուկասովի, Շելկոշնիկովի, Ց. Այվազովսկու, Լիմնի, Պատկանեանների, Քանանովի և այլն և այլն

Բաժանորդագրութիւն ընդունվում է. «Русскія Вѣдомости» *լրագրի գրասենեակում Կարանիկովի* (Маховая), «Трудъ» (Тверская). «Новое Время»-ի, *Վօլգի* (Кузнецкій Мостъ), «Русская Мысль»-ի (Никитская) *գրավաճառանոցներում։*

Հատորի գինն է (մօտ 900 մեծադիր երեսներ) 4 ռուբլի, չքեղ թղթի վրա 5 ռուբլի։ Գիրքը լոյս տեսնելուց յետոյ գինը կաւելանայ։

Խմբագրութեան հասցէն.—МОСКВА, Зубовскій бул. д. 6, кв. 1.

Ժողովածուի նպատակին համակրող հրատարակութիւնները թող բարեհաճեն արատապել այս յայտարարութիւնը։

4—5 *Խմբագիր՝* ԴՊ. ԶԱՆՇԵԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

ՕՐ. Ե. ՑՈՎՀԱՆՆԶԱՆԵԱՆԻ

Տեղափոխվում է Մողնու և Սաղօվայա փողոցների անկիւնի տուն № 13։ Ընդունվում են երկու սեռի մանուկներ և պատրաստվում դիմնազիօններ, ռէալական և այլ պետական դպրոցներ մտնելու համար։

(№ 95) 4—5

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ԹՈՅԼՏՈՒԹԵԱՄԲ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ծրագիր. 1) առևտրական թուաբանութիւն. 2) կրկնակի հաշուապահութիւն ՆԱԻԹԱՅԻՆ—ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ, առևտրական, բանկային և այլն. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) վայելչագրութիւն։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ, ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ԻՑ

Բաղու, Տատարսկայա փողոց, տուն № 30։

Կուրսերի հիմնադիր՝ Ա. ՏԷՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Վաճառվում է հիմնադրի նոր գիրքը՝

„КРАТКІЕ ОЧЕРКИ ПО НЕФТОПРОМ.-ЗАВОДСКОМУ СЧЕТОВОДСТВУ“

(№ 83—հ. շ.) ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ 7—20

ԿՏԱՒԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

(*Բամբակի մանուածքի*)

ԺԱՌԱՆԳՈՒՀԻՆԵՐԻ Յ. ՉԻԹԱԽԵԱՆԻ

(*Հիմնված է* 1869 *թ.*)

ԳՈՐԾԱՐԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՊԱՏՎԱՐԱԿԱՆ ՄԵԴԱԼՆԵՐ

ԿՏԱՒ ՍՈՎՈՐԱԿԱՆ 15—30 ՎԵՐՇՕԿ ԼԱՅՆՈՒԹԵԱՄԲ
ԿՏԱՒ I ՏԵՍԱԿԻ 15—30 » »
ԿՏԱՒ ՀԱՍՏ » 12—30 » » (*մանուաւոր պատուէրներով*)

ԹԵԼ ԿԾԻԿՆԵՐՈՎ,
ԹՈՎ ԲԱՄԲԱԿԻ ԹԵԼԻՑ 1/4"—3" ՀԱՍՏՈՒԹԵԱՄԲ
ԹԵԼԻ ԾԱՅՐԵՐ (пакля) ՄԵՐԵՆԱՆԵՐ ՄԱԲՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ։

ԲԱՄԲԱԿ ՄԱԲՐԱԾ (вата) I ՏԵՍԱԿԻ
ԲԱՄԲԱԿ ՄԱԲՐԱԾ II »
ԲԱՄԲԱԿ ԹԵՐԹԵՐՈՎ, I ՍՈՍԻՆՁՈՎ, (*մանուաւոր պատուէրներով*)
ԲԱՄԲԱԿ ԹԵՐԹԵՐՈՎ, II » ՆՇՇՏՈՎ,

Առաջարկում ենք պ.պ. վաճառականներին և գործատէրներին ուշադրութիւն դարձնել մեր գործարանում պատրաստվող կտաւի ամրութեան և ներկեր ընդունելու յատկութեան վրա և չը չփոթել Ռուսաստանից եկած կտաւների հետ։

Կտաւի նմուշները և պրէյսկուրանտները ուղարկվում են ըստ առաջին պահանջման ձրիաբար։

Հասցէն՝ Тифлисъ, главная контора фабрики. Уголъ Нагорной и Сергіевской ул. собс. д. телефонъ конторы 266, а фабрики 24. (շ. և.) (№ 78) 11—50

Дозволено цензурою, Тифлисъ, 22 Августа 1897 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.